

M

891.71  
M-91

9.9

ԿԱՇԻԿԵՐԻ ԴՐՈՅԻԿԱՆ  
ԳՐԱԴԱՐԱՆ



ԳԼԵՖ ՈՒՍՊԵՆՍԿԻ

ՄԻ ՔԱՌՈՐԴ ԶԻ

499 | 999

ԹԵՏՐԱՍ • 1935

831  
PL-91

ԿԱԾԱՐԵՆԵՐԻ ԳՊՐՈՑԱԿԱՎՐԱԳՐԱԳՐԱՆ

ՀԵ-9

17 NOV 2010

176

ԳԼԵԲ ՈՒՍՊԵԽԱԿԻ

# ՄԻ ՔԱՌՈՐԴ ԶԻ

000000

## ԶԵՔԵՐԻ ԳՐՔՈՒՅՆԸ

3755

000000

ԳԼԵԲ ՈՒՍՊԵԽԱԿԻՆ 864 ՆԱՐՈՂՆԵԿԱՆԵՐԵ

Թարգմանեց  
ՀԱՅՐ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

Г.П.Б. в Лнгр.  
Л. 1935 г.  
Акт № 75

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ  
ՏԵՐԵԿԱՆ 1934

26 ՏԵՐ ԱՎ

14467

Պատ. Խմբադիր՝ Արամ Հայրիան  
Տեխ. խմբագ. Տ. Խաչվանքյան  
Արքադրիչ՝ Գ. Աթայան



39908-63

Քլովիտ 8590, հրատ. № 3023, պատվ. № 991, տիր. 3000  
Հաւանված և արտադրության 4 հուլիսի 1934 թ.  
Ստորագրված և տպելու 2 հոկտեմբերի 1934 թ.

Գետերակի տպարան — Յերևան

## ՄԻ ՔԱՌՈՐԴ ԶԻ

I

... Թվում ե, վոր ամբողջ «մեր գալառում», տեղական քաղքենիական (նույնիսկ ամենաբարձր տեսակի) ինտելիգենցիայի մեջ չկա տեղական վիճակագրական «տվյալների» այնպիսի ջերմեռանդ սիրող, վորպիսին միանգամայն անսպասելիորեն դարձա յես, դյուզի բնակիչս, այս տողերը գրողս: Վիճակագրական կոմիտեյի հրատարակությունների հսկայական հակերն ու կապոցները, վոր անսպայման ստանում եր դյուզի քաղքենիական ինտելիգենցիան, մշտապես և ամենուրեք, մի ինչ-վոր ճնշող տպայորություն եյին գործել և գործում են նրա վրա: Ահա ստանում ես մի հաստ գիրք, վերցնում ես, հայտնի չե, թե ինչու անսպայման հոգոց հանում և դնում ես դարակը: Յեվ այդ գրքերն անշարժ նիրհում են այնտեղ, վորտեղ գրգիւ են: Մինչդեռ չե՞ վոր այդ հաստ, ձանձրալի գրքերում, թվերով ասված ե մեր կյանքի այն «բուն» ճշմարտությունը, վորի մասին մենք բոլորովին դադարել ենք խոսել մարդկային լեզվով: Յեվ հարկավոր ե

թեկուզ մեկ անգամ հետաքրքրվել այդ կոտորակներով, զերոներով, առհասարակ այդ թվային «ձավարով» (վորով լցված են վեհակադրական գրքերն ու աղյուսակները), —և նրանք բոլորը, թվերի այդ ամբողջ «ձավարը», կսկսեն մարդկային կերպարանք առնել, ամենորյա կյանքի պատկերներ դառնալ, այսինքն վոչ թե մեռած ու ձանձրալի նշանների, այլ կյանքի ամենաբազմակողմանի պատկերման նշանակություն ստանալ:

Յեվ, այնուամենայնիվ, յեթե ինձ հետ չպատահեր մի բոլորովին չնչին դեպք (ինչպես ստորև կտեսնի ընթերցողը), յես յերբեք չեյի ճաշակի մի ինչ-վոր ու աղտով ծածկը-ված այդ եղերի համը, յերբեք չեյի համկանա թվական այդ մրուրից հանվող յեզրակացությունների մեծ նշանակությունը: Ինձ համար, ընթել «քաղքենուս» համար այդ թվերը յեղել են սոսկ անարժեք մի գործ, դատարկաբանություն: Մենք, յերբեք մտադիր չի-ներով րմբոնել այդ գործը, այնուամենայնիվ յերբեմն մեր ուղած իմաստն ենք տալիս թվերին, մեր սեփական յեզրակացությանն ենք հանգում, և, իհարկե, ամեն անգամ այդ անում ենք միայն «ծիծաղի համար»: Մեր դատարկապորտ ու քաղքենիական կյանքում լինում են բոպեներ, յերբ մենք կարողանում ենք իսկական ձեռվ հայհոյել ամեն ինչ: Յեվ ահա ընթացիկ գործուներությունը վատարանելու հենց այդպիսի բոպեներին, հայհոյանքի

յենթակա սյուժեների թվում մեր ծաղրանքից չի վրիպում նաև վիճակագրությունը, չի վրիպում միայն այն պատճառով, վոր բոպե-յի տրամադրությունը պահանջում է բազմակողմանիորեն հայհոյել կյանքը:

Պրիսուխինո գյուղում,—այդպիսի բոպեներին ծաղրում է մի վորեե շինական,—դպրոցն ունի յերեսուն աշակերտ, Զասուխինո գյուղում—քսան, իսկ Ովլեուխինում\*)—ընդամենը յերկու աշակերտ... Յեվ ի՞նչ, դրանից իբր թե հետեւում է մի այսպիսի յեղ-քակացություն, վոր միջին թվով մի դպրոցին ընկնում է տասնյոթ հոգի, հետո յել ինչ-վոր մի գերո, այդ զերոյի կողքին ել ինչ-վոր բան... Միևնույնը կլիներ, յեթե յես միացնեյի գրպանում մեկ միլիոն ունեցող կալատուշկինին և կոպեկի կարոտ, նշխար թր-խող կուկուչկինային: Այս դեպքում միջին թվով յուրաքանչյուրին կհասներ կես միլիոն: Պարզ ե, վոր մարդկի իբր թե գործ են ա-նում... վող ստանալու համար: Միւնգա-մայն պարզ ե:

Լավ, ինչո՞ւ Բոլվանկինն իր քիթը խո-թեց ժողով ու մեջտեղ բերեց իր աղյուսը,—Հարցնում է վորեե մեկն այդ մերկացնող մե-նախոսության ժամանակ: «Վորեե մեկն» այդ հարցը տալիս է հենց այնպես, պարապու-

\*) Այս անունների մասին տես 92 էջի ծանոթությունը: Ծ. թ.

Թյունից: Բայց քանի վոր «Հայհոյանքը» վերաբերում ե վիճակագրության, ուստի զարմանալի չի լինի նաև լսել այդ պատահական հարցի պատսախանը, վորը շատ հարմար է «Հայհոյանքի» յենթակա թեմային:

—Հապա ինչպե՞ս,—պատասխանում ե Հայհոյանքով զրադվող խոսակիցներից մեկը, —վիճակագրական տվյալների համաձայն, յուրաքանչյուր ունեոր ծխին ընկնում ե վեց ծնունդ, իսկ յուրաքանչյուր մըռտ խրնիթին\*)— յերկու ծնունդ և չորս մահացություն: Հետեւապես, յեթե Զեմստվոն եժան գնավ վերջնի Բալվանկինի աղյուսը և բաժանի գեղջկուհիներին, մըռտ խրճիթներում Հուլանդական\*\*\*) վառարաններ շինելու համար, ապա գեղջկուհիներն իսկույն կունենան վեց տոկոս ծննդաբերություն, վաճառական Բալվանկինն ել հրաշալի կերպով կըծախի իր աղյուսը, վորն առանց այն ել փըշանում ե և վորը թե՛ գործարանի և թե՛ իրեն, Բալվանկինի հետ գրոշի արժեք ունի: Ի՞նչպես դու չես հասկանում այդ: Վո՞չ, բարեկամ, այսպիսի յեղրակացություններով կարելի յե շատ ու շատ բան ճանկել...

\*) Խոսքը ոռւսական հին գյուղի այն խրճիթների մասին և, վորտեղ վառարանի ծուխը զուրս եր գալիս նրա զոնից, ապա—կամ հատուկ պատուհանից ու նախառենյակից, կամ խրճիթի դռնից:

\*\*) Սենյակի վառարան աղյուսից շինած:

Քաղքենուն ըբջապատող կյանքի կառուցվածքը, վորտեղ «գումիել» բառը վերջին գերը չի խաղում, ստիպում ե նրան այդ տիրապետող սկզբունքը կերպառել նաև այնպիսի կենսական յերևույթների նկատմամբ, վորոնք նանույնիսկ բոլորովին չի հասկանում, վորոնք չեն ել մանում նրա զլուխը: Զարմանալի չե, վոր ամենքին և ամեն ինչ Հայհոյելու այն հաղվաղեղ բոպեներին, յերբ ել հայհոյանքի նյութ չի լինում, յերբ քաղքենու բերունն ե բնկնում խոսակցության համար այնպիսի մի անձեռնմխելի նյութ, ինչպիսին վիճակագրությունն ե, «գումիելու» հիմնական սկզբունքը մնում ե քաղքենու մտքում: Յեվ նա այդ սկզբունքը գործադրում ե այնտեղ, վորտեղ այդ սկզբունքը վոչ մի նշանակություն չունի: Անկեղծ ասած՝ յես չգիտեմ և վոչ մի վիճակագրական «օյունակ», վորը հենց այդ խմաստով մեկնարանվեր մեր գյուղի բնիկ քաղքենու կողմից: Յեվ յես հիշում եմ միմիայն մի դեպք, յերբ պարապությունից սկսված հայհոյանքը, նյութն սպառվելու պատճառով հասնելով մինչև վիճակագրությունը, հանկարծ դադարեց, վորովհետեւ բոլորովին հնարավոր չեր հայհոյանքի յենթակա թվի նկատմամբ թեկուզ մի կաթիւ մեղագրանք հայտնել, այսինքն «գումիել» բառը, վոր հենց այն ե՝ յեզզվի ծայրին եր», չասվեց և հայհոյողը լոեց:

— Զեմ հասկանում, թե ինչե՞ր են սկսում

ՊՐԵԼ,— այսպես եր ասում մի անգամ ինձ  
այդպիսի քաղքենիներից մեկը, վորը յեկել  
եր թեյ խմելու: Մէ բանով զրադվելու համար  
նա թերթում եր մեր զավառի «տեսու-  
թյունը», վորը հենց նոր եր փոստից ըստաց-  
վել,— չեմ հասկանում, թե ինչ հիմարու-  
թյուններ են դուրս տալիս:

— Ի՞նչ ե պատահել:

— Զիու միայն քառորդն ե հասնում յու-  
րանքանչյուր ինչ-վոր քառակուսի հողու:  
Թույլ տվեք հարցնել, այս ի՞նչ ե նշանակում:

— Ինչպե՞ս թե «քառակուսի հողու» ի՞նչ  
եք ասում, իվան իվանիչ:

Իվան իվանիչը նայեց դիրքն ու ասաց.—

— Ե՛ս, սատանան տանի, ուզում եյի ա-  
ռե, վերատուգման յենթակա հողուն\*): Բայց  
ի՞նչ ե նշանակում ձիու քառորդը: Այդ վո՞րն  
ե ձիու չորրորդ մասը: Վո՞րն ե նրա ա-  
ռաջին մասը: Այդ ուղղակի ծաղր ե:

— Ինչպե՞ս թե ծաղր ե:

— Շա՛տ պարզ... ուղղակի ծաղր ե և  
ուրիշ վոչինչ... աղյուսից, հզի կնոջից, ու-  
նեոր ոջախից գեր կարելի յե վորեւ ոգուտ  
ստանալ ու նույնիսկ զբանը դնել... իսկ այտ  
ձիու քառորդ մա՞սը. սատանան դիտե, թե  
ինչ ե...

\*). Ցարական Ռուսաստանում «հողիներ» եյին կոչ-  
վում հարկատու խավին պատկանող մարդիկ: Վեր-  
առուգման յենթակա «հողիներ» եյին համարվում  
այն տղամարդիկ, վորոնք ցուցակադրվում եյին վեր-  
առուգման ժամանակ:

Թեև յես կարող եյի բոլորովին այլ կերպ  
հասկանալ այդ «թվերը», վորոնք յենթակա  
եյին ամեն տեսակ հայհոյանքի, բայց, ճիշտն  
ասած, ապրելով դյուզի ընակիչների հետ,  
սովորել եյի նրանց պես քիչ հետաքրքրվել  
խոշոր ու մանր, բազմաքանակ այդ զերոնե-  
րով, վոր մենք միշտ տեսնում ենք բազմա-  
հատոր աշխատությունների աղյուսակնե-  
րում: Գուցե լավ մտածելով, յես կարողա-  
նայի հակածառել իվան իվանովիչին, բայց  
լուրջ մտածելու ցանկության բացակայու-  
թյունը և հայհոյանքով սահմանափակվելու  
սովորությունը չեյին թողնում, վոր խոսեմ  
անհասկանալի թվի մասին:

«Մի քառորդ ձի»,— մտածեցի յես և  
միացա իվան իվանովիչի ծաղրանքին: «Աշ-  
խատությունների» հաստ հատորները, ինչ-  
պես առաջ, այնպես ել իվան իվանովիչի հայ-  
հոյանքից հետո հանդիսաւ նիրհում եյին այն-  
տեղ, վորտեղ դրված եյին: Յեկ ամեն անգամ  
յես խորը հառաչում եյի, յերբ վերընթեռ-  
նելով այն ամենը, ինչ վոր կարելի յեր վեր-  
ընթեռնել, որտեղությամբ տեսնում եյի, վոր  
բացի «աշխատություններից», ուրիշ վոչինչ  
չկա կարդալու:

Բայց ահա իմ կյանքում կատարվում ե  
բոլորովին անսպասելի հեղաշրջում, — իմ սե-  
մական աչքերով տեսնում եմ ձիու քառորդը:  
Յեկ այդ ժամանակից խոշոր ու մանր զերոնե-

բով լի «աշխատությունները» արտակարգ նշանակություն ունեն ինձ համար:

## II

Այս՝ հիմա յես գիտեմ, թե ինչ ե մի բառորդ ձին: Գիտեմ, վոր այդ քառորդը դատարկ բան չե, վոր այդ կոսորակը չափազանց լուրջ նշանակություն ունի:

Ահա թե ինչ պատահեց:

Յես կարդացի ու վերջացրի մի նոր թարգմանական վեպ, վորը տպված եր հաստ ամսագրերից մեկում: Իմ արամագրությունը շատ ծանր էր: Մի կարծեք, թե զյուղի բնակիչների ջղերի վրա ազդում են կյանքի ա՛յն յերեվույթները միայն, վորոնք պարփակում են մեզ համար սովորական «դճլոնքի» եյությունը, թե միայն այդպիսի յերեսներն են հուզում և անհանգստացնում մեզ: Բոլորովին վոչ: Նայեցեք, մեր դավառական հասարակության մեջ ինչպիսի<sup>0</sup> իրարանցում ստեղծեց թեկուզ «կոմունի լիդայի ռոմանը»: Այն ամենը, վորը բացի ծառայությունից, ընտանեկան վեճից և ակումբի բուֆետից, չգիտեր մի այլ յելք, կյանքի մի այլ ընթացք, — այդ ամենը հանկարծ սկսեց «ա՛խ» անել, հառաչել, սկսեց դես ու դեն ընկնել, խոսել ամբողջ ուժով և ամբողջ ձայնով: Հիշում եմ, թե ինչպես հալից ընկած գալառական դեղավաճառը, գիշերվա ժամի յերկուսին դուրս գալով

ակումբից և գտնվելով այնպիսի վիճակում, վոր ստիպված եր իսկույն դրկել լավտերի ոյունը, — այնուամենայնիվ կարողացավ գոռալ՝ «հըռոաշա'լի յե»: Այսպես նա շարունակում եր գոռալ կառքում, վորտեղ նրան նստեցրեց քաղաքապահը\*:

Այս, մենք ե'լ ենք սիրում յերեմն լավուրախանալ ու տիրել: Այս անգամ ինձ հետել այդպես յեղագի: Վեպը սովորական երծերուկ ամուսին, ջահել կին (դե, իհարկե, մարկիզուհի), հետո, իհարկե, մի յերիտասարդ — Անսատուլը: Առաջին եջից մինչև վերջնը — վոխաղարձ Կարարերություն: Խարերայություն, վորն արտահայտվում եր նամակներով, աչքերով, իրար ձեռք սեղմելիս: Մի խոսքով, մարդկային ամենահասարակ հրճվանքների ինչ-վոր մի հարատե գողություն, մի գողություն, վորի կարիքը յերեք ու յերեք չի զգացել ամսական ութ ուռելի ստացող և վոչ մի աղախին: Իսկ մարկիզուհին, — նա լույս-աշխարհում չի կարող ապրել առանց «թուցնելու», առանց «գողանալու»: Ասենք, բանը վեպի մանրամասնությունը չեր, բանն այն եր, վոր յես այդ վեպից ձանձրացաւ և դուրս գնացի զբոսնելու:

Յես քայլում եյի ձանձրույթով, վոչնչի

\*) Ցարական վաստիկանության ամենաստորին պատռնյա:

Ժամին չեցի մտածում ու հանկարծ պատահամբ լսեցի. —

— Հենց եղ ե բանը: Ավասու, վոր ձի չունենք:

Դրանք կնոջ ցավագին խոսքեր եյին: Յեռուղղակի չգիտեմ, ինչու «ձի» բառը լսելով, հիշեցի իվան իվանովիչի հետեյալ Փրազը.

«Զիու քառորդ մա՛սը: Ասացե՛ք խնդրեմ, արդյոք այդ ծաղը չե՞»:

«Դուցե, — մտածեցի յես, — միջին թվով հենց այդ կնոջն ե հասնում ձիու քառորդը: Հապա նա ի՞նչպես ե ապրում մեկ քառորդով...»:

— Բա վ՞ոնց անես առանց ձիու, — զավեց տղամարդու ձայնը, — առանց ձիու կորա՛ծ ես:

«Հիրավի, ի՞նչ պիտի անեն առանց ձիու, — մտածեցի յես, — ի՞նչ պիտի անեն մեկ քառորդով»:

Կարծես, մեկն ինձ ասաց, վոր իմ առջև գտնվողներն ուրիշ բան չեն, բայց յեթե կենդանի մի վիճակագրական կոտորակ, իսկ մի տկնիթարթից հետո յես արդեն բոլորովին պարզ գիտեյի, վոր տեսնում եմ կենդանի մարդու կերպարանքով մի կոտորակ, տեսնում եմ, թե ինչ են այդ զերոները, մեծ ու փոքր ստորակետերը: Յեկ մի բուռն ցանկություն զգացի մոտենալ այդ կենդանի կոտորակին:

Կոտորակը յերեսնամյա մի կին եր: Նրա մոտ կանգնած եր փոքրիկ, մեկ ու կես տարե-

կտն մի աղջիկ: Նրանք յերկուսով դուրս յեկան վողորմելի մի խրճիթից, վորը նախասենյակ անդամ չուներ: Կնոջ և աղջկա դիմաց կանգնել եր մի մուժիկ, ըստ յերեսութին նույնպես մի միավոր, բաժանված առնվազն տասնյակ տեղական բյուջեների\*) վրա, վորովհետև նրա հագուստի յուրաքանչյուր քառակուսի վ տնաշափի վրա կային չորս յերկողւմանոց ծակեր: Յերեկ նա յել գիտեր, վոր «մի քառորդ ձին» խմի լավ բան չե:

— Ի՞նչ կլիներ, վոր հիմի ձի ունենայինք, — ասաց նա կարոտով:

— Հենց եղ ե, ե՛, դժվար ե առանց ձիու, — ասաց կոտորակ-կինը:

— Խոտհարքը չատ ե հեռու:

— Յերկու վերստ կլինի:

— Դու եսպես արա, — մտածելով ասաց տասի բաժանված մուժիկը, — մի ձեռքով վերցրու ճաչն ու գերանդին, իսկ փալասն ու աղջկա կիսամուշտակն եր փաթաթիր ուսերիդ... եղակես շատ լավ կլինի, չե՞:

— Բա աղջիկ՞ս:

— Վոտով կդնա:

— Բորիկ վոտով վ՞ոնց կդնա, են ել յերկու վերստ:

— Եղ ձիշտ ե, — ասաց մուժիկն ու սկսեց գարձյալ մտածել:

\*) Համապետական, տեղական, մասնավոր տնտեսության յեկամուտների ու ծախքերի նախահաշիվ:

Կոտորակ—կինն ել եր մտածում:

Շուտով այդ կոտորակների մտքերը ձեռավորվեցին այսպես.—

— Այ թե ինչ արա, Ավոտյա: Աղջկան նստեցրու ուսերիդ...

— Բա ինչո՞վ բոնեմ նրան: Մի ձեռքումս կիսամուշտակը, փալասը, մյուսում—գերանդին ու ճաշը: Նա խո մազերիցս չի՞ բոնելու:

— Եղ ել ճիշտ ե,— խորհելով ասաց մուժիկն ու ելի սկսեց խորը մտածել կոտորակինոջ պես:

Մուժիկն ըստ յերեսութին ինչ-պոր միտք հղացավ. նրա դեմքն աշխուժացավ:

— Մնում ե ահա թե ինչ անել. հանիբ թաշկինակդ:

— Հետո վոնց կլինի:

— Հանիբ, կտեսնես:

Կինը լաթով կապված ամանը դրեց գետնին, ապա նրա մոտ դրեց նաև գերանդին, կիսամուշտակն ու փալասը, արձակեց մեծ թաշկինակը, վորով ծածկել եր կուրծքն ու ծայրերը կապել մեջքի վրա, և ասաց.

— Հետո ի՞նչ:

— Հիմի մտիկ արա, — ասաց մուժիկն, աշխուժանալով առնվազն հազար տոկոսով, — հիմի մտիկ արա, թե ինչ հնար կանենք: Կանդնի՞ր ուղիղ:

Նա մոտեցավ աղջկան ու բարձրացրեց, նրան:

— Հապա, հարգելի որիորդ, համեցեք, վագոն նստիր մայրիկի ուսին... պա:

Աղջիկը մոտներով ու ձեռներով բռնեց մոր պարանոցից:

— Կամաց Պաշուտկա, կիսեղդես ինձ, — շնչաց մայրը. — ել ի՞նչ կասես:

— Սպասիր, մի վոազիր, — պատասխանեց մուժիկը: — Ազա՛, — ճայն տվեց ինձ, — խնդրում եմ մի նեղություն քաշես, ես թաշկինակը տաս ինձ, քեզ մատաղ, յես չեմ կարող աղջկան թողնել:

Յես վերցրի թաշկինակն ու տվի մուժիկին:

— Շատ ու շատ չորհակալ ենք: Հիմի մենք ենպես նստեցնենք Պաշուտկային, ինչպես առաջին կարգի վագոնում:

Նա բացեց թաշկինակը, ծալեց անկյունն անկյան վրա դնելով, գցեց Պաշուտկայի վրա և թաշկինակի ծայրերը կապեց մորն այնպես, վոր նա ուղղակի անցնում եր մոր թեկրի ու պարանոցի տակից և վերջինիս վրա կապվում այնքան հաջող, վոր Պաշուտկան, կարծես, բարձի վրա յեր նստել:

— Հմ, վոնց վոր չծխողների վագոն զինի: Գնացքը կանգնում ե տասնհինգ րոպե, բուժեան ել իրա կարգին, — հրճվանքով բացականչեց մուժիկը. — մի՛ վախենա, Պաշուտկա, թո՛ղ թաթիկիներդ, ազա՛ս նստիր...

Պաշուտկան ազատ թողեց թաթիկիները,

սկսեց թափահարել վոտները, ծափ տալ ու  
թռթովել:

— ԵՇ, խելոք կաց, վիզս սեղմված ե,—  
ասաց մայրը, — Հանդիստ նստի:

— Վերցրու ճաշը, վերցրու գերանդին, —  
աշխուժությամբ ասում եր մուժիկը, տալով  
կնոջն այն ամենը, ինչ վոր նա պիտի տաներ,  
և կինն իրերը տեղավորեց իր ձեռներում ու  
թևերի տակ: Բոլորը տեղավորվեց, բայց նա  
դեռ չեր քայլում: Տիրուր եր նրա գեմքը: Թեև  
տասը բյուջեյի բաժանված նրա բարի հարևա-  
նը ծիծաղելի վարպետությամբ հնարեց այդ  
«վագոնը», բայց և այնպես կինը գեռ պետք ե  
ճարպկություն և հմտություն ցույց տար, և  
նա վրոշ ժամանակ անշարժ կանգնած եր մի-  
ևնույն տեղում, աշխատելով ավելի հարմար  
վերցնել մերթ գերանդին, մերթ կիսամուշ-  
տակն ու մերթ փայտար:

— Եսպես լավ չեղա՞վ — հրճվելով հարց-նում եր մուժիկը, չհավատալով իր հնարած «վագոնի» անհարմարության:

— ԶԵ՞... շնչում եր կինը, աշխատելով  
դուստր դուրս բերել պինդ կապած թաշկինա-  
կից, — չե... վոչինչ, լավ է: Հիմի կհասնենք  
արտք:

— Հիմի կհասնես, վոչինչ, մի՛ շտապիր։  
կհասնես, ելի՛ : Դե՛ռ, յերբորդ զանդը տվեց,  
բարի ճանապարհ։

— Ծնորհակալություն, — զգացված ասաց

Կինը և դանդաղ, առանց աջ ու ձախ թեքվելու առաջ շարժվեց :

— Մի ճի՛լիներ, Ե՞...—ել չհրձվելով և  
Հոգոց հանելով ասաց բարերորմուժիկը և իր  
պատառութված վերնազգեստի փեշով սկսեց  
օրբել ճակատի քրտինքը:

Բայց յես ել չեյի լսում նրա խոսքերը:

կինը գնաց, իսկ յես չեյի կարող չգնալ  
նրա յետեից: Յես սաստիկ հետաքրքրվում ե-  
յի կենդանի մարդու մեջ տեսնել իբր թե վոչ  
մի նշանակություն չունեցող վիճակագրական  
կոտորակի ուրվագծերը: Յեվ, թեև մարդն ա-  
ռայժմ չնչին չափով եր կնեղանություն տվիլ  
այդ կոտորակին, բայց յես արդեն զգում եյի,  
վոր իմ տեսածը դեռ չի սպառում այն ամբողջ  
բովանդակությունը, վորը թագնված է իբր  
թե դատարկ թվի մեջ, և վոր այդ թվական  
հանելուկում դեռ շատ բան կա, վոր հարկա-  
վոր ե անպայման իմանալ ու քննել:

Յեվ այս պատճառով յես հետևեցի կնոջը :

III

Կինը գնում եր այնքան զգույշ, լարված,  
այնքան եր աշխատում իր բեռան ծանրության  
տակ հավասարակշռություն պահպանել, վոր  
յես ակամա հիշեցի մի լարախաղաց կնոջ:  
Վերջինիս տեսել ելի, չգիտեմ, թե յերբ, քա-  
ղաքից դուրս գտնվող այդում: Նա ել մեծա-



գույն զգուշությամբ, բարակ լարի վրա պահպանում եր իր հավասարակշռությունը, բավական բարձր դժոնվելով գետնից և դիտող ամբոխից։ Չե՞ վոր նա ել բեռնված եր վոչ պակաս, քան այս կինը, և, ըստ վիճակագրական տվյալների, նա վայելում էր 00 հայրական խնամք, 00 մայրական սեր, և այնուհետև արդեն ամբողջ թվերով գալիս եր անտրեպրենյորների\*) ու տերերի ազահությունը, իսկ տասնյակավոր թվերով նա ամեն ըոպե զգում էր գիշատիչ հայացքները գիշատիչ մարդկանց, վորոնք պատրաստ եյին սեփական հաճույքի համար հափշտակել նրա միսն ու արյունը։ Այո, նա պետք ե շատ և շատ զգույշ քայլեր լարի վրա։

Կոտորակային թիվը, վորը կին եր կոչ-  
վում, շարունակում եր գնալ, յերբեմն խիստ  
անհամբերությամբ գոռալով աղջկա վրա.

— Հերի՞ք ե մազերիցս բռնես։ Խո վայր  
չես ընկնելու, ել ի՞նչ ես չարություն անում։

— Ծանր է քեզ համար, —վերջապես, ա-  
սայի յես, ցանկանալով պարզել այդ կոտորա-  
կի գոյության մանրամասնությունները:

— Իհարկե, ծանր ե, — ասաց կոտորակը,  
բայց առանց վորեւե զայրույթի. — ախ, ինչ  
կլինի մի ձի ունենայինք. . . հիմի խոտը հնձել  
ե պետք, առանց ձիու դժվար կլինի:

— Խոտհարքը դեռ չ'ատ ե հեռու։  
— Դեռ շատ պիտի գնանք... մենք արտը  
վերցրինք առանց վիճակահանության, հեռու  
տեղում, վորպեսզի ձի... մի՛ չանգոփի, հի-  
մար, չասացի՞ քեզ... .

Աղջիկը սկսեց լալ, բայց մայրը չեր կա-  
րող ժամանակ վատնել նրան հանգտացնելու  
համար։ Նա քայլում եր և կցկտուր խոսքերով  
(նրա համար դժվար եր խոսել) պատմում եր  
ինձ իր դրությունը։

— Վիճակահանությամբ բաշխվող հողերը մոտածիկ են ու լավ, բայց քիչ են մեղ համար... Մենք առանց վիճակահանության վերցրինք հեռու տեղերը, վորտեղ մացառուտ ել ե բանում։ Վիճակահանությամբ տրվող հողերի դիմաց սրանք յերկու անդամ ավելի յենքնինում մեկ հոգուն... Վիճակահանությամբ մի հոգուն...

Նրա պատմածը յուրաքանչյուր մեկ-յեր-  
կու բառից հետո ընդհատվում եր ծանր շնչա-  
ռությունից: Այսպես նա պատմեց նաև այն  
մասին, վոր նրանք արդեն ձիասարք ել ունեն:

Այդ ձիասսարքը պատահմամբ ե ընկել ուր-  
լրանց ձեռքը: Ուղղակի աստված՝ ե տվել:  
Նրանց մոտ յերկու տարի ապրել ե մի աղքատ  
պառավ, վորի թոռը Պետերբուրգում թամ-  
բագործություն\*) եր սովորում: Յեկ ահա,  
յերբ թոռն սկսել ե ինքնուրույն աշխատել, իր  
մոտ ե կանչէլ պառավ տատին ու նրան պա-

\* ) Զեռնարկումների :

Հելու համար իրրե շնորհակալութուն, մեծ զեղջով ուղարկել ե մի լրիվ ձիսսարք: Վերջինիս արժեքը դեռ չի վճարված, կվճարվի այն ժամանակ, յերբ խոտը ծախեն: Հենց այդ ժամանակ ել կարելի կլինի «մտածել» (առաջմ) և ձի ունենալու մասին: Խոտի բանն ել դեռ մի քիչ դժվար է, ինչո՞վ պիտի տեղափոխվի (նրանց ընդամենը մեկ քառորդ ձի յե հասնում): Իսկ յեթե խոտի բերքը շատ լինի, ուրեմն հենց դաշտում հարկավոր կլինի ծախել, այնքան եժան, վոր ձիու մասին կարելի էլինի մտածել միայն մեկ տարուց հետո:

Լսելով կնոջ այդ կցկտուր, շնչահեղծ խոսքերը, յես յերեմն մտածում եյի մոտենալ և ոգնել նրան: Սակայն այն «գիտական մեթոդ», վորին յես աշխատում եյի հետեւել իմ դիտողությունների ժամանակ, կասեցնում եր իմ այդ մտադրությունը: Մի անդամ կինը նույնիսկ կանդ առավ, հազար, բայց յետ այնուամենայնիվ մնացի գիտական հողի վրա, — չմոտեցան նրան և չխախտեցի վիճակադրական «Եջի» թվերի ճշտությունը: Եջն այնպես ել եջ մնաց, առանց վորեւե փոփոխության, իսկ կինո հազար ու շարունակեց գնալ, պահպանելով իր հավասարակշռությունը:

Վերջապես, մենք հասանք խոտհարքը:

#### IV

Ցածրադիր դաշտում, վորը ծածկված երթիվերով ու մացառուտներով, բավական մեծ տարածության վրա գտնվում եյին խոտի փոքրիկ դեղերը, վորոնք մեր վայրերում «կույտեր» են կոչվում: Թփուտների միջև յեղած բացատներում և այլ, մերկ տեղերում յերեսում եյին այդ փոքրիկ դեղերը: Ահա հենց այդ «կույտերը» պետք եր տեղափոխել ու դարսել մի քանի դեղեր, կամ միայն մի մեծ դեղ, վորը միշտ մարագի յե նմանվում: Այդ մեծ դեղը ներքելից, մի ծայրից մյուսը սահենով չափվելով, ծախվում ե գնորդներին:

Կանգ առնելով խոտհարքում, կինն ըզգուշությամբ նստեց գետնին, զգուշությամբ վայր դրեց իրերը, ինքն արձակեց մեջքի վրա կապված թաշկինակը, իջեցրեց Պաշուտկային: Նա ամբողջովին քրտնած եր, մազերը կպել եյին թշերին ու ճակատին: Մի քանի րոպե նստած եր լուռ, հանգստանալով ու սրբելով դեմքի ու պարանոցի քրտինքը: Պաշուտկան հրում եր նրան և ինչ-վոր բան եր ուզում, բայց մայրն այնքան հոգնած եր, վոր ուշադրություն չեր դարձնում մանկան վրա: Յես հարմար տեղ գտա թփի տակ, ստվերի մեջ, սկսեցի ծիել և շարունակել իմ ուսումնասիրությունը :

— Ավ-դե-ե-ե՛յ ... Ավ-դե-ե-ե՛յ, — բար-

ճրածայն կանչեց կինը, և շուտով թփերից  
դուրս յեկավ մի մուժիկ, փոցին ուսին:

Նա հոգնած քայլերով մոտեցավ կնոջը,  
բռնեց դեպի իրեն վազող Պաշուտկայի ձեռ-  
ները, նստեց գետնին և ամբողջ ընտանիքն  
սկսեց ուտել, նախապես խաչակնքելով:

Ուտում եյին լուռ, համարյա չեյին խո-  
սում: Ուտում եյին և միւնույն ժամանակ  
հանգստանում: Կարճատե եր ճաշը, կարճա-  
տե եր հանգիստը:

— Չլինի՞ թե անձրե գա, — ասաց Ավղե-  
յը, նայելով յերկնքին, — Հրես, քամին հարա-  
վից ե փչում: Քանի անձրե չկա, գործն առաջ  
տանենք...

Նա վեր կացավ, դարձյալ խաչակնքեց  
մի քանի անգամ, հետո գնաց անտառ, վոր-  
տեղից շուտով լսվեց կացնի հարվածը: Այդ  
ժամանակ մայրն աշխատում եր գրկի մեջ ո-  
րորել ու քնեցնել Պաշուտկային, բայց վերջի-  
նը թարսի նման ճվում եր, կամակորություն  
անում և ինչ-վոր բանի վրա գանդատակում:  
Յերբեմն մոր հորդորանքներում հնչում եր  
ջղային մի չետ, — նա չեր կարող Պաշուտ-  
կայով զբաղվել, ձեռները ծալած նստել: Նա  
պետք ե դժվար աշխատանք կատարեր:

— Չի քնում գրողի տարածը, — ասաց նա  
Ավղեյին, յերբ վերջինս դուրս յեկավ ան-  
տառից:

Բայտ յերեռութին, այդ հանգամանքը չատ-  
տիրեցրեց Ավղեյին: Ուսի վրա յերկու մեծ

ձող պահած, վորոնք բերել եր անտառից, նա-  
մտազրաղ կանգնեց կնոջ առաջ և նայեց Պա-  
շուտկային:

— Գուցե սրան մենակ՝ թողնենք, — տա-  
տանվելով հարցրեց նա կնոջը:

— Իհարկե մենակ պիտի մնա... թեկուզ  
ել լաց լինի, ի՞նչ արած... լաց լինի, թե վոշ  
մեկ ե, ուրիշ ճար չկա...

— Վոչի՞նչ, — մեղմորեն ասաց հայրը,  
նստելով Պաշուտկայի մոտ, — Պաշուտսա ջան,  
նստիր ու մտիկ արա, թե ինչ պիտի անենք  
յես ու մայրիկը... լա՞վ: Ա՛յ, մենք եստեղ  
ենք, հեռու չենք... հանգիստ կնստես, հա՞:  
Չենց վոր տուն գնաք, նվեր կտամ մի սաղ պլիկ  
կտամ, լա՞վ:

Պաշուտկան կամացուկ ինչ-վոր բան թո-  
թովեց:

— Ա՛յ, ապրես: Դե արի յես քեզ պահեմ,  
թութուշիկս... Ե՛հ, Ավղոտյա, գնանք:

Պաշուտկան կատարեց իր խոսքը: Նա  
հանգիստ նստած եր, վորովհետեւ հայրիկն ու  
մայրիկը հեռու չեյին և նրա աչքերի առաջ  
իրենց գործն եյին անում: Իսկ այդ գործը  
դժվար եր...

— Առանց ձիու հոգիներս դուրս են դա-  
լիս, — դառնությամբ ասաց Ավղեյը:

— Դե լավ, եղ խո գիտենք, — բավական  
իիստ ասաց կինը, չցանկանալով դատար-  
կաբանություն անել և, ըստ յերեռութիւն,

ամբողջ ուժը լարելով ծանր աշխատանքի համար,—ձողն անցկացրու խոտի տակ:

Վորովհետեւ ձիու քառորդով հընարավոր չե խոտը տեղափոխել, ուստի մեր կոտորակները խոտի յուրաքանչյուր «կույտի» տակ պիտի անցկացնեյին յերկու ձող, բռնեյին դրանց ծայրերից, ինչպես պատգարակ, և, բարձրացնելով չորս փթից վոչ պակաս ծանրությունը, տանեյին այնտեղ, վորտեղ պիտի լիներ խոտի մեծ դեղը:

Զողերը դրվեցին խոտի տակ: Զորս փըթանոց կույտի ծանրությունից նրանք խրվում եյին փափուկ, ճահճային հողի մեջ:

— Դե՛մ, որհնյալ աստված, — ասաց Ավելյը, կանգնելով առջևից: Կուանալով, նայետ տարավ ձեռները, բռնեց ձողերի ծայրերից և, դեռ չքարձրացրած ու այդպես կրոշած մնալով, ասաց, — Ավդոտյա, հանկարծ չվերցնես, կամաց, զգուշությամբ...

Ավդոտյան գիտեր գործի վողջ դըժվարությունը և աշխատում եր ճարպկություն գործ դնել, դժվարը բարձրացնելն եր, իսկ հետո հարկավոր եր ամուր բռնել ձողերից. չորս փութ ծանրությունը չեր պոկի նրանց թերը: Յերեք անդամ նրանք յերկուսն ել կուաշան դեպի կույտը, փոխելով իրենց տեղերը, փորձեցին բարձրացնել, կամաց-կամաց խոտը տեղահան յեղալ, պոկվեց թաց հողից վերջապես, ձիդ թափելով, նրանք բարձրաց-

րին «պատգարակը»: Ավդոտյայի համար այդ առանձնապես դժվար եր և պահանջում եր, վոր նա ուղղակի հաշմի իր մարմինը: Հստյերեւոյթին, նրա ուժերից վեր եր միանդամից բարձրացնել, և նա ձողի մի ծայրը դնելով ծնկին, յերկու ձեռքով բռնեց մյուս ձողի ծայրը, բարձրացրեց, մեկ ձեռքն ազատեց ու նրանով բռնեց ծնկի վրայի ձողը: Վերջապես, յերկուսն ել բարձրացրին բեռն ու տարան: Նրանց մարմինները լարի նման ձգված եյին:

Լարի պես ձգված, գնում ե գյուղացին արորի յետեւից: Նա իբր թե սոսկ գնում ե, և ձեզ համար, դիտողի համար չկա վոչ մի ծանրություն այդ քայլվածքում: Սակայն ավելի՝ մոտեցեք նրան, նայեցեք այդ մեջքին, վորը, կարծես, չի կարող կուանալ, — նա ամբողջովին դողդողում ե: Զկա նրանում անգամ գնդասեղի գլխիկի չափ մի տեղ, վորը չդողդողա ամենալարված ճիգերից: Հարկավոր ե պահել շունչը, հավաքել բոլոր ուժերը, սանձել յուրաքանչյուր մկանը, վորը տառապում ե իր հաղթահարած ծանրությունից, ստիպել նրան, վոր դժվար գործ կատարի, ամենաընչին ազատություն չտալ նրան, և ահա թե ինչու արտում հաստատուն քայլերով գնացող մարդը, վորն այնքան հանդիսաւ ե թվում, իսկապես յուրաքանչյուր իր քայլն անում ե ջղերի սարսափելի լարվածությամբ, այնպիսի լարվածությամբ, վոր արտի ծայրը

Հասցնելուց հետո, միայն կարելի յէ ազատ շունչ քաշել: Սակայն խսկական գյուղացին շունչ առնելու համար չի կանգնում արտի ծայրին, այլ շարունակում ե իր լարված աշխատանքը, գիտենալով, վոր, յէթե թեկուզ մի բողե հանգստանա, կթուլանա և հետո ավելի դժվար կլինի:

Ուժերի հենց այդպիսի սաստիկ լարվածությամբ Ավղեյն ու Ավղոտյան բարձրացրին ու տարան խոտի չորս փթանոց կույտը: Նըրանցից յուրաքանչյուրի մարմնի ամենաչընչին մասնիկը ճգված եր լարի պես: Իհարկեանրանք յերկուսով հետո «զոռ կտան» և իրենց ջղերով կանեն այն, ինչ վոր չի կարելի անել խսկական ուժով. բայց այժմ յես, կանգնած լինելով զուտ գիտական տեսակետի վրա, ուղղակի դժվարանում եյի դիտել այդ աշխատանքը, վորն առյերեռույթ բոլորովին հեշտ եր թվում:

Մի կողմ թողած այն ծանրությունը, վոր նրանք պետք ե կրեյին առանց այն ել հնձելուց հոգնած ձեռներով, նրանց աշխատանքի հաջողությունը հենց սկզբից խանդաբում եր Պաշուտկան: Քանի դեռ հայրն ու մայրը յերեռում եյին, նա լրում եր, շարունակ նայելով նրանց: Բայց յերբ քայլեցին ու Պաշուտկան տեսավ, վոր նրանք հեռանում են, սկսեց արտասովոր մի լաց: Յես տեսա, վոր Ավղեյն ու Ավղոտյան փորձեցին յերեսով

դառնալ դեպի յերեխան, նայել, իմանալ, թե ինչ պատահեց նրան: Սակայն խոտի կույտը ամուսնու և կնոջ Փիղիկական ուժից և վոչ մի կաթիլ չեր ուզում զիջել, և Ավղեյն ու Ավղոտյան կարող եյին միայն արագացնել իրենց քայլերը, այսինքն ավելի շատ լարել իրենց ուժերը, բայց չեյին կարող կանգ առնել:

Մի քանի բոպեյից հետո, յերբ Պաշուտկայի լացը տարածվում եր ամբողջ դաշտում, յես տեսա, վոր այդ լացը ծնողների համար չմնաց ձայն բարբառո հանապատի: Ավղեյն ու նրա կինը, ուղղակի գլուխները կորցրած, անտառից վազում եյին դեպի Պաշուտկան: Դեռ նրան չհասած, ծնողները նույնիսկ դեն գցեցին ձողերը և սարսափելի վախեցած նետվեցին դեպի աղջիկը:

— Վա՛յ, եղ ի՞նչ ե քեզ կծել, — գոչում եր Ավղեյը:

— Չլինի՞ թե գարշելի ոճն ե կծել, — հետեւ ասաց Ավղոտյան և ընկնելով գետին, Պաշուտկայի մոտ, սկսեց դիտել նրա մերկ վոտները:

— Սատանայի տեղեր են: Քանի՛ քանի՛ թունավոր ու զզվելի իժեր կլինեն եստեղ: Հը՛, խո չե՞ն կծել:

— Վոչինչ չի յերեռում... ել ի՞նչ ես բոռում, — հուզված ասաց Ավղոտյան և շըըմփացրեց Պաշուտկային:

— Դե լավ... ասաց Ավղեյը, — վո՞նց անի յերեխան, մենակ ե մնացել... վախեցել

Ե.. յես ել վախեցա, կարծեցի, ոճն և կծել:  
ԶԵ՞ վոր մարդ մեռնում և եղ գարշելիների  
կծելուց: Դու ինչո՞ւ յես յերեխայի վրա բար-  
կանում, չԵ՞ վոր փոքրիկ ե... ո՛ֆ, ձի՛ չու-  
նենք, ձի: Յեթե ունենայինք, խոտը կրար-  
ձեյինք, դու ել կնստեյիր սայլի վրա, կեր-  
գեյիր... Ե՛հ, ի՞նչ անենք, ուզենք-չուզենք,  
Պաշուտկային պետք ե վերցնենք մեղ հետ...  
Հնձած դաշտում վո՞նց պիտի քայլե բորիկ  
վոտներով, իսկ յեթե թողնենք, լացը սիրտնե-  
րը կկտրատի... Ե՛հ, ուրիշ ճար չկա, Ավ-  
դոտյա, պետք ե վերցնենք մեղ հետ, թե չե,  
հարցըեց Ավդեյը:

Չ'սպասելով Ավդոտյայի պատասխանին,  
Ավդեյը բռնեց Պաշուտկայի թաթիկը և տա-  
րավ դեպի խոտի կույտը: Նրանք ձողերը  
դնում եյին կույտի տակ, իսկ Պաշուտկան  
նստած եր գետնին: Յերբ ձողերն արդեն դըր-  
ված եյին, Ավդեյը մոտեցավ խոտին, նրա  
վրա փոս սարքեց, հետո մոտեցավ Պաշուտ-  
կային, վերցրեց նրան ու տարավ դեպի կույ-  
տը:

— Հապա՛, թութուշիկս, նստիր եստեղ,  
փոսի մեջ... միասին կե՛րթանք, լա՞վ:

Պաշուտկան ինչ-վոր թոթովեց:

— Դե՛հ, հանգիստ նստիր:

— Ի՛հ, ցալը քեզ տանի, —ասաց Հոգ-  
նաստանջ Ավդոտյան:

— Ե՛հ, վերցնենք խոտը...

— Հողե՛մ լալկան գլուխող, իսկի հանգիստ  
չես թողնում:

Ու ելի ամուսինները կռացան բեռը բար-  
ձրացնելու, ելի՛ յերկու-յերեք անգամ փո-  
խեցին տեղերը, իսկ այս անգամ վախենում  
եյին նաև Պաշուտկայի համար, — չլինի՞ թե  
վայր ընկնի: վերջիվերջո ջղերի վիթխարի  
լարվածությամբ նրանք վերցրին բեռը: Բացի  
ձողերի ու խոտի ծանրությունից, ավելացավ  
նաև Պաշուտկայի ծանրությունը: Ի՞նչ արած:  
Խեղճերին ձիու միայն մի քուռակ եր հաս-  
նում, —ուստի նրա ուժի պակասորդը պետք ե  
իրենց վրա վերցնեյին:

## V

Ինչպես ասել եմ, յես շարունակ ինձ պա-  
հում եյի խիստ գիտական մեթոդին հետե-  
կով: Բայց յերբ ըմբռնեցի, թե վորքան ծանր  
եր իմ աչքով տեսած աշխատանքը, զգացի,  
մոր հազիվ թե կարելի լինի վորեւ բանով  
լրացնել վիճակագրական կոտորակի առանց  
այն եղ բարդ բովանդակությունը: Եւ ի՞նչ  
կտրելի յե ավելացնել այդ կոտորակը բա-  
ցատրելու համար, —հարցնում եյի ինքս ինձ  
և ուղղակի վերջ կտայի գիտական տեսակետի  
վրա մնալու իմ խստությանը, յեթե իրոք  
կարեյի լիներ մի վորեւ բան ավելացնել տե-  
սածիս: Բավական եր, վոր յես իմ տեսած դե-  
ղերի թիվը բազմապատկեյի յերկու մարդկա-

յին եյակների ուժով, վորապեսզի իսկույն դադարեցնելի իմ հետազոտությունը:

Յեվ իսկապես, յես չկարողացա շարունակել դիտողություններս։ Գնացի տուն... ի՞նչ կարող եմ իմանալ գյուղում ապրելով։ Սակայն այն թվերը, վորոնց նկատմամբ յես մինչև հիմա անտարբեր եյի և վորոնք անըսպասելիորեն տեսա մարդկային կերպարանքով, — այդ թվերը կոդնեն ինձ հասկանալու մարդկային միավորներին ու կոտորակները։ Յեվ այդ ժամանակից սկսած՝ յես նվիրվեցի վիճակագրության...

## ԶԵՔԵՐԻ ԳՐՔՈՒՅԿԱԸ

(Եպիզոդ ապառքապարտների կյանքից)

Վաճառական ու գործարանատեր Իվան Կուզմիչ Մյասնիկովը, վերջացնելով գործերը, վորոնց համար նա հաճախ գալիս եր նահանգական քաղաք, վերադարձավ կեղտու հյուրանոցի կեղտու համարը, հրամայեց պատրաստել ծիերն ու ինքն ել պատրաստվեց մեկնելու։

— Իվան Կուզմիչ, ինչո՞ւ քիչ մնացիք մեզ մոտ, — ասաց հյուրանոցի ծառայողը, ոգնելով Իվան Կուզմիչին, յերբ վերջինս համարձում եր իր սակավաթիվ իրերը. — մեր քաղաքում բոլորովին չզբոսնեցիք...

— Հետո կզբոսնեմ... փառք աստծո, գոնե ազատվեցի։

— Ամե՞ն ինչ բարեհաջող վերջացրիք...  
— Ամեն ինչ... լավ ե... հապա տես այս քանուր :

Մյասնիկովը բաճկոնի տակից հանեց

ծառայողին տվեց մի ինչ-վոր փոքրիկ գըր-  
քույկ։ Ծառայողը տարակուսելով վերցրեց  
գրքույկն ու յերկար, նույն տարակուսանքով,  
դիտել սկսեց։

— Այս ի՞նչ բան ե, — վերջապես հարցրեց  
նա։

— Այս, սիրելի բարեկամ, — ինքնաբա-  
վականությամբ և ուրախ դեմքով ասաց Մյաս-  
նիկովը, — այս բանն արժե տասնհինգ հազար  
ռուբլի, այ' թե ինչ։

— Այս փոքրիկ ճա՞նձը, տասնհինգ հա-  
զար՝

— Այս, այս, ճանձը, տասնհինգ հա-  
զար . . . ի՞նչ ես կարծում, ի՞նչ բան ե։

— Բայց չե՞ վոր այս հասարակ թուղթ  
ե . . . նման ե գրքի . . . այստեղ բոլորովին փող  
չկա . . .

— Հենց լավն ել այդ ե. արի ու իմացիր,  
վոր այստեղ փող կա . . . զուտ թուղթ, թուղթ  
ե, բայց տասնհինգ հազար ե կշում . . . կոչ-  
վում ե չեք։

Այս խոսքի վրա ծառայողը շուր տվեց  
գրքույկը, դիտեց մյուս կողմուն, փոչինչ չը-  
հասկանալով, աչքերը հառեց վաճառակա-  
նին։

— Այ թե ինչ . . . կարելի յե սրանից  
կտրել մի թերթիկ և իսկույն փող ստանալ . . .  
փորձեց բացատրել Մյասնիկովը, և, վորով-  
հետեւ ծառայողը դրանից ել վոչինչ չըհաս-

կացավ, ուստի չեքերի գրքույկի տերն սկսեց  
մանրամասն պատմել բանկային գործերը։  
Չի կարելի ասել, վոր այդ գործերի շարա-  
դրությունը, վոր յերկար տևեց, ծառայողի  
համար պարզեց գրքույկի նշանակությունը։  
Ծառայողը շարունակում եր գրքույկը պա-  
հել իր ձեռներում, յերբեմն ուշադրությամբ  
դիտելով այն։ Այսուամենայնիվ, յերբ վա-  
ճառականը, վերջապես, ավարտեց իր ճառը,  
ծառայողը հազոր հանեց և մտազբաղ ասաց։

— Այո՛, այո՛, փոքրիկ բան ե, բայց ինչ-  
քա՞ն շատ փող ե կլանել։

Այս արտահայտությունը շատ դուր յե-  
կավ չեքերի գրքույկի տիրոջը։

— Ճիշտ ե, հրաշալի՛ գրքույկ ե, ինչ-  
քա՞ն փող ե կլանել։

— Տասնհինգ հազար՝ — շարունակեց ծա-  
ռայողը, — չե՞ վոր առաջվա տարիներում  
այդ մի ամբողջ գյուղ եր, այն ել քանի՛  
գյուղացիներով, անտառներով։ Յեկ այս-  
պիսի ճանձը կուլ ե տվել այդ բոլորը։

Ծառայողը խորին տարակուսանքով շար-  
ժեց գլուխը և գրքույկը տվեց վաճառակա-  
նին, վորը դարձյալ ինքնարավականություն  
արտահայտեց և գրքույկը դրեց բաճկոնի  
գրպանը։

— Ո՛, մեղավոր մարդ, — հայտնի չե, ին-  
չու մտածեց ծառայողը։

Խոսակցությունն ընդհատեց կառապանը,  
վորը հայտնեց, թե ամեն ինչ պատրաստ է:

## II

Մի ժամ հետո կառքը ոլանում եր գյուղական ճանապարհով և հետզհետե հեռանուաքաղաքից: Նրա մեջ նստած եր Մյասնիկովը, վորը հագել եր տաք, դառան մորթով պատրածիր մուշտակը (աշնան գիշերվա հնարավոր ցրտից պաշտպանվելու համար): Իվան Կուղմիչը ննջում եր, գլուխն որորելով աջից ձախ և առջեից յետ: Յերբեմն նա շոշափում եր կուրծքը, ստուգելով գրքույկի ներկայությունը: Ամեն անդամ, յերբ մատները դիպչում եյին գրքուկին, հայտնի չե, ինչու նա հիշում եր հյուրանոցի ծառայողի զարմանք արտահայտող խոսքերը, վորոնք աշխուժացնում եյին իրեն և ստիպում եյին ակամավերհիշել, թե ինչ ե պարունակում գրքույկը: Յեվ վորքան նա պարզ եր պատկերացնուաց յդ հազարների բաղկացուցիչ մասերը, այդ գրքույկը, վորն այնպե՞ս զարմանալի կերպով կյանել եր այդ հազարները, այնքան քիչ եր ցանկանում քնել և ինչ-վոր ձանձրույթ եր զգում:

Մի անգամ Իվան Կուղմիչը նույնիսկ հառաչեց:

Ինչո՞ւ: Մի՞թե իսկապես գրքույկն այնքան շատ դրամ է կլանել: Մյուս կողմից

մի՞թե իվան Կուղմիչն իրոք այնքան շատ աշխատանք ե թափել այդ գրքույկի վրա, վոր հառաչանքին հետեւող այդ միտքը, թե նա աշխատանք ե թափել, բոլորովին հանգըտացըրեց, վոր նա այլիս հոգոց չեր հանում և շուտով քնեց:

Անհրաժեշտ ե լավ ծանոթանալ Իվան Կուղմիչի և նրա գործունեյության հետ, վորպեսողի պատասխանենք չեքերի գրքույկի շուրջը խոնաված բոլոր հարցերին:

Ինչպես ասացի, Իվան Կուղմիչն ուներ վաճառականի կոչում, թեև վոչինչ ընդհանուր չուներ «վաճառականի» այն տիպի հետ, վորը ծանոթ ե ընթերցողին, և վերջինս նրան տեսել ե թե՛ խանութում և թե՛ բեմի վրա. Իվան Կուղմիչն իր կերպարանքով, հայացքներով և գործունեյության յեղանակով բոլորովին նման չեր հին տիպի «վաճառականին»:

Ով գործ է ունեցել հին վաճառականի հետ, նա կասի, վոր այդ վաճառականն ապրում եր խարերայությամբ, իր հարստությունը ձեռք եր բերում կեղտոտ ճանապահներով: «Կեղտոտ հարուստ» բառերը նույնքան կսազեն հին վաճառականին, վորքան «խարիր, վոր ծախես» ասացվածքը—նրա գործունեյությունը: Նրա մեջ ամեն ինչ խարերայություն եր: Սովորաբար նա ամուսնանում եր վոչ թե կնոջ, այլ փողի սնդուկի հետ\*), բայց

\* ) Ամուսնանում եր մեծ սժիտ ստանալու համար:

ձևանում եր, վոր ինքը ընտանիքի տեր մարդ ե  
և ապրում է աստվածահաճո կերպով, գիտենալով, վոր իր ընտանիքում բոլոր կեղծում են ու ստում, ինչպես ինքը: Քաղաքավարությունն ու փաղաքանքը, վորոնցով նա զիմավորում եր իր խանութը յեկողներին, ուրիշ բան չեյին, բայց յեթե գնորդի «աչքերը կապելու» միջոց, վորով նա «սաղացնում եր» փթած ապրանքը, կամ մի վերշոկ պակաս չափում, յերբեմն ել մի ամբողջ արշին, յեթև հաջողվեր... Հին վաճառականի մասին այսպես եյին մտածում բողորը, այսպես եր մըտածում նաև ինքը, վորովհետեւ, թեպետ նա հաճախակի մեծ կապիտալներ եր վաստակում, թեպետ հաճախակի նրան հաջողվում եր «խարել մուշտարուն», բայց իր հոգու խորքում նա զդում եր, վոր իր գործը «մաքուր չե», վոր ամեն բոպե նրա զիմակը կարող են պատռել և նրա հետ խոսել որենքով և բացի այդ, «հանդերձյալ կյանքում» ևս բանը լավ չի լինի: Ահա թե ինչու հին վաճառականը իր խորին պարտականությունն եր համարում «վոչ ինչ չխնայել» աստծո տաճարին, խեղդել իր խղճի ձայնը՝ յեկեղեցուն նվիրելով հարյուր փթանոց մի զանդ, կամ տեղական սրբապատկերին նվիրելով մեկ փթանոց կերոն, վորը սովորաբար ձեռքում բռնած, հեխհե, քրտնաթոր անցնում եր յեկեղեցում գտնվող ամբոխի միջով, մարդկանց հրելով աջ ու ձախ: Աստը-

ծո տաճարին տված զոհողությունը հանդըստացնում եր նրա հոգին, վորն զգում եր, թե ինքն այնքան ել մաքուր չե: Բայց այդ նվերները հազիվ թե նրան կարողանային հանդըստացնել անողում տրենքի նկատմամբ, վորի սուաջ չեր կարելի վորեւ կերոն վառել և վորը զանգի կարիք չեր զգում: Յեվ իսկապես, ուրենքը, փողոցի հերթապահ վոստիկանից սկսած մինչև նահանդապետը, շարունակ թունդ սպառնալիք եր հին վաճառականի գլխին: Վաճառականը կթի կով եր այն բոլոր մարդկանց համար, ովքեր իշխանության վորեւ ներկայացուցիչ եյին: Նա կաշոռքներ եր տալիս, աղուհաց եր մատուցում, նվերներ ուղարկում, ստորագրում եր այն ալբոմներում, վորոնք հասարակության կողմից մատուցվում եյին մայրաքաղաքից յեկած վորեւ նշանավոր անձնավորության, հրավառություն եր կազմակերպում «ի պատիվ...», փողով մասնակցում եր ինչ-վոր ալդրիայի\*), վորը տեղի յեր ունենում «հոգուտ» և այլն, ել չխոսենք այն մասին, վոր գաթան և հմեղ նախաճաշը, վորոնք տրվում եյին հրավիր-վածներին ու անկոչներին, անպակաս եյին նրա սեղանից: Յեվ այդ նախաճաշերին միշտ պետք է լինելին ամենահրաշալի խավյար և ա-

\*) Եժանագին, մատչելի վիճակահանություն, վորի ժամանակ խաղարկությունը տեղի յե ունենում առման առնելուց անմիջապես հետո:

մենահազվագյուտ ձուկ (յերկու բան, վորոնք  
անխզելիորեն կապված եյին «վաճառական»  
բառի հետ, ինչպես նույն բառի հետ անխզելի-  
որեն կապված եր «աղվեսի մորթուց պա-  
տրաստված մուշտակն» ու «տաք ջուր տուր»  
բացականչությունը): Թաղապետը, քաղաքա-  
պետը, պրիստավը, հրեշջ խմբի պետը, աղ-  
վես դատավորը, խնդրատուն և այլն,—բո-  
լորը գալիս եյին նրա տունը, խանութը, փող  
եյին վերցնում, խավյար և ձուկ եյին ուտում,  
ողի խմում, շարունակ սպառնում եյին և  
շնորհակալություն եյին պահանջում իրենց  
ներողամտության համար: Հին վաճառա-  
կանը բոլորին վճարում եր, բոլորին կերակը-  
րում, մեղավոր զգալով իրեն, և այդ ար-  
գելքներից ազատվելուց, այսինքն բոլորին  
կերակրելուց և բաժին հանելուց հետո միայն,  
հետեւյազ որը կարողանում եր «մուշտարու-  
աչքը կապել» և «ապրանք սաղացնել»: Իզուր  
չե, վոր հին վաճառականը աղվեսի մորթուց  
պատրաստված մուշտակ եր հագնում. նրա  
ամբողջ գործունեյության մեջ ինչ-վոր աղվե-  
սային բան կար, և որեցոր, տարեց-տարի  
մարդիկ նրան վորսում եյին ավելի փութա-  
ջան, ավելի յեռանդով, քան թե իսկական  
տղվեսին: Յեկ ահա ուզածի չափ ստելով,  
թեյ խմելիս քրտինքի մեջ կորչելով, դողա-  
լով այն յերկյուղից, վոր կպատժի իր ա-  
րարքների համար, այս աղվես-մարդն իր

կյանքի վերջում թագցնում եր խաբեյությամբ  
ու կեղծավորությամբ դիզած փողերը և, մնա-  
ցած կյանքը հանդիսատ անցկացնելու համար  
պետք է աղքատ ձեւանար, հավատացնել բո-  
լորին և ամեն մեկին, վոր մի կոսկեկ «հոգե-  
պահուստ» փող չունի և իրեւ այդ խոսքերի  
ապացույց, միայն բողկ եր ուտում:

Իվան Կուզմիչ Մյասնիկովը վոչինչ ընդ-  
հանուր չունի այդպիսի տիպի հետ. նրա  
դեմքին չկա վոչ այն քաղցրավուն ժպիտը,  
վորը նկատվում եր նախկին վաճառականի  
դեմքին, յերբ նա աղբանքը քառորդ արշինով  
սղակաս եր չափում,—վոչ ել այն յերկյուղը,  
վորը լինում եր թաղապետի ներկայությամբ:  
Ընդհակառակը, իվան Կուզմիչի դեմքը հա-  
մարձակ է, վստահ, և իվան Կուզմիչն այդ  
բացահայտ համարձակությունը չի ել թաք-  
բացահայտ նույնիսկ միրուքում, վորովհետեւ «ներ-  
կա ժամանակվա պահանջների» համաձայն,  
նա ածիլում է այդ միրուքը: Կապիտալի հին  
ու նոր ներկայացուցիչների այդ եյական տար-  
բերությունը բացատրվում է նրանով, վոր  
հին տիպը հոգու խորքում իր գործը համա-  
րում եր «վո՛չ այնքան խղճմտանքով» գործ,  
իսկ նոր տիպն, ընդհակառակը, բոլորովին  
չեր կասկածում, վոր իր գործն իսկական է,  
վոր հայրենիքը ևս պարտական է շնորհակալ  
իինել, վոր նա իր կապիտակը նվիրում է ընդ-  
հանուրի ոգտին, ու թեև գործում է անձնա-

կան շահերից դրդված, բայց այնուամենայ-  
նիւ հաց ետալիս ուրիշներին, կյանք ետա-  
լիս «մեռած տեղերին» և կապիտալները,  
ինչպես գրվում երագրերում (վորոնց հետ  
մասամբ ծանոթ են իվան Կուզմիչը), — կապի-  
տալներ, վորոնք, լրագրերի ասելով և իվան  
Կուզմիչի համոզմունքով, աստված գիտե, թե  
ինչքան պիտի քնելին, յեթե նա Մյասնիկովը,  
գրանք չողտագործեր: Իվան Կուզմիչի այդ  
համոզմունքը հաստատում են հասարակական  
կարծիքը, մամուլի կարծիքը և այն խսկական  
աղքատությունը, վորի մեջ նրա կապիտալնե-  
րը, նրա հացն խսկական բարեգործություն: Են  
հանդիսանում:

Ահա թե ինչու նրա նայվածքը համարձակ  
ու պարզ, ահա թե ինչու նրան հարկավոր չե  
վոչ պոչը խաղացնել, վոչ ել վախենալ. նա  
գործում երենքի հիման վրա: Յեկ այս  
պատճառով իվան Կուզմիչը բոլորովին կարիք  
չի զգում մեկ փիժանոց վոսկեզոծ կերոն զոհա-  
բերել տեղական սրբապատկերին և գրանով  
հանգստացնել իր խիղճը: Այդ խիղճը հան-  
գիստ եր, վորովհետեւ իվան Կուզմիչը «ուղղա-  
կի շրջանառության մեջ եղանակում իր կապի-  
տալները», խսկ այդ արդելված չե և աստվա-  
ծաշնչի մեջ այդ մասին վոչ մի սարսափելի  
բան չի ասված: Ահա թե ինչու նաև այն ծխի  
յեկեղեցու սպասավորները, վորին պատկանում  
եր իվան Կուզմիչը, նրանից վոչ մի Փինանսա-

կան քաջալերանք չեն սպասում, մի անգամ  
ընդմիշտ համոզվելով, վոր այստեղ «քելեխ»  
սպասեն իզուր ե: Գործելով որենքի հիման  
վրա, իվան Կուզմիչը բոլորովին հանգիստ ե  
նաև այս կողմից, լավ գիտենալով, վոր վոչ  
վոք չի համարձակվի նրան ձեռք տալ. նա ու-  
նի պահանջվող արտոնագրերը\*) բոլոր տալիք-  
ները վճարել ել լիովին: Առանց չողոքորթե-  
ցու, առանց վախենալու, վոչ հետեւ զանից,  
վոչ գաղտնի կերպով, մութ անկյունում ե  
կաշառքը «ձեռի մեջ խոթել», այս ուղղակի  
«վճարել ե», տվել ե «հասանելիքը»: Յեկ դրա  
ձնորհիվ, իշխանությունը վոչ միայն չի հա-  
մարձակվի նրա վերաբերմամբ բռնել այն  
սպասնական գիրքը, վոր շարունակ բռնում եր  
հին տիպի վաճառականի հանգել, այլև հո-  
գեւորականության նման գիտե, վոր այստեղ  
ել «խիել չես կարող», և իվան Կուզմիչի վե-  
րամերմամբ իրեն պատկառելի հեռավորու-  
թյան վրա յե պահում: Մի խոսքով, նա գի-  
տակցում ե, վոր կապիտալն ուժ ե, վոր հի-  
մարություն ե նրան սնդուկում պահել, վոչ  
այդ կապիտալը պետք ե շրջանառության մեջ  
դնել, վոր կարելի յե գնել ու վաճառել այն  
ամենը, ինչ վոր գնվում ու վաճառվում ե,  
վոր շահույթ ստանալը նույնպես միանգամայն  
թույլատրված ե: Այս ամենը խիստ տարբե-

\*) Իշխանությունից ստացած վիայական, վորով  
թույլատրվում ե առեւտուր անել:

բռւմ և հին և նոր տիպի վաճառականներին և  
նորը հանգիստ է, ինքնավստահ և վոչչից չե  
վախենում, վոչ այստեղ, վոչ ել այնտեղ:

Յեվ ահա փոխանակ, ըստ հին սովորու-  
թյան, մեկնելուց առաջ բարի յերթի մաղթանք  
կատարելու, ինչպես անում եր հին վաճա-  
ռականը, յերբ Մոսկվա յեր գնում փթած ասլ-  
րանք դնելու, փոխանակ իր դեմքը, հետո  
կառքը, նույնիսկ կառապանի գդակը մեռոնա-  
ջրով սրսկել տարու, Իվան Կուզմիչը, վոր-  
պես «նոր տիպ», վեց փամփուշտով լցրած  
ատրճանակը գրալանն է դնում և բոլորովին  
հանգիստ մեկնում է «կյանք տալու» մեռած  
վայրերին ու կապիտալներին, մեկնում է դե-  
պի ռուսական հեռավոր ու խուլ անկյունները,  
վորտեղ այդ կապիտալների անսպառ պաշար  
և կուտակված և վորտեղ անզոր եր վոտ գնել  
հին տիպի վաճառականը:

Վորպես հեքիաթային մի հսկա, Իվան  
Կուզմիչը, ոժոված փողի անսահման ուժով,  
ոկտոմբեր ուղղակի լեռներ շարժել: Ահա մի  
տեղ աղմկում ե մթին ու ահավոր անտառը,  
հոխորտում ամպերի ու մրրիկների գեմ, մայ-  
րական գդմանքով ապառտան և տալիս հազա-  
րավոր գաղաններին ու թոշուններին: Իվան  
Կուզմիչը յերեան և գալիս այդ անտառում,  
անցնում է երկու-յերեք շաբաթ, ու մեկ ել  
տեսար անտառը չքացավ, փախան գաղաննե-  
րը, աղմկալից կոխնչով, աղմուկով թո՛ան

գնացին թոշունները: Մնացին միայն զերան-  
ները, վորոնք ճզմել են փաղչող նապաստակ-  
ներին, ապա ձողերն ու տախտակները: Շու-  
տով այդ ել կչքանա այստեղից, կմնա միայն  
դատարկ տարածություն: Իվան Կուզմիչի գըր-  
պանը կտողի փողով, — գույնզգույն, փոքր  
թղթադրամներով, վորոնք իսկույն ելի գոր-  
ծի կղբվեն ու մեկ ել տեսար մի վորեե այլ հե-  
ռավոր ու խուլ անկյունում լավեց հառաչանք  
ու մոնչյուն, հեղեղի պես հոսեց յեզների, խո-  
ղերի ու վոչխարների արյունը... Անատուննե-  
րի հոտը զառնում է թարմ կամ աղած միս,  
ճարպ, մորթի, փթեր ու ֆունտեր, և այս բո-  
լորն իր հրթին չուտով չքանում է, փոխա-  
դրվում ճռճռան սայլերով, թողնելով դա-  
տարկ արոտատեղն ու Խվան Կուզմիչի գրալա-  
նում — գույնզգույն թղթադրամները, վորոնք  
իսկույն մի նոր գործի մեջ են դրվում... Սա-  
կայն այդ գործն ինչ տեսակի յել վոր լինի,  
նրանից հետո մնում է մի ինչ-վոր ավերածու-  
թյուն, ինչ-վոր բան և մեռնում, կարծես:  
Պետք է հիշել, վոր Իվան Կուզմիչն ունի հաս-  
տատուն բնավորություն և ամուր ջղեր,  
նա յերբեք չի զդում այդ մահացությունը, —  
վոչ այն ժամանակ, յերբ ընկնում եյին հազա-  
րավոր ծառերը, վորոնք ճքճքում են, չեցին  
ուզում կացնի զոհ լինել, վոչ այն ժամանակ,  
յերբ գանակով մորթած եյին հազարավոր  
յեղներ, հազարավոր ձկներ, վոչ ել այն ժա-

մանակ, յերբ հազարավոր ուրիշ անասուններ, վորոնք կենդանի եյին թողնվել, մռնչոցով, խոխոցով կամ տխուր մայունով լցվում եյին ամուր փակված վագոնները, հայտնի չե, թե ուր եյին տարվում մորթվելու համար։ Այս բոլորը իվան կուզմիչի համար եր,— յերեք հարյուր քսանհինդ սաժեն փայտ, հինգ հարյուր փութ ճարպ և այսինչ թվով անասուններ։

Վերջացնելով այդ բոլորը, զեռ որեր առաջ կենդանի սաժենների ու փթերի գործը, նա հոգնածություն եր զգում և համոզվում եր, վոր փողը ձրի չի ստացվում, վոր նա շատ աշխատանք ե թափում այդ փողը ձեռք բերելու համար և վոր «իհարկե» արդարացի յեն «բարերար», «ապրուստ տվող» բառերը, վոր իվան կուզմիչը լսում եր իր կենդանացրած խուլ վայրերում։

Եեվ իսկապես, վորքան ել հասարակ բան ե կապիտալի շրջանառության սիստեմը, վորին կառչում ե իվան կուզմիչը, վորքան ել հասարակ բան ե հարստանալու յեղանակը, վորը հիմնված ե բնության և ուրիշի ձեռների արտադրածը վոչնչացնելու վրա, վորքան ել հասարակ բան ե բնության ու մարդու այդ բազմամյա աշխատանքը կլանելը և հետո գըրպանը փողով լցնելը,—այնուամենայնիվ խուլ վայրերում յերբեմն կյանքի այնպիսի պայմաններ են լինում, վոր գործողության այդպիսի սիստեմն ել, պատրաստի բարիքների

այդպիսի առ ու ծախքն ե՛լ, բնական և աշխատանքային հարստությունների այդ գլխովին վոչնչացումն ե՛լ կարող են իսկապես բարեգործություն համարվել, իսկ իվան կուզմիչը— իսկական բարերար…

Որինակ, ինչպիսի՞ դրություն ե յեղել մասպոյասովով գյուղում, վորտեղ իվան կուզմիչն իշխում ե հիմա։ Հիմա նա գնում է այդ գյուղը, ուր զեռ չեն հասել իր կապիտալները։

### III

Տանվեց-տասնյոթ տարի առաջ ամբողջ քայլառը, վոր այժմ վայելում ե իվան կուզմիչի բարերարությունը, իրավամբ պատկանում եր Խուսատանի ամենասովորական խուլ վայրերի թվին… Անծայրածիր դաշտե՛ր, ուր յերբեմն միայն լսվում եր յեղերուկների ու ազուավների կոինչը և յերբեմն արորին կըոթնած գյուղացու կերպարանքը, վորը հեռվից խիստ հիշեցնում եր նույն այդ ազուավներին։ Խուլ ու մթին, թավուտ և անանցանելի անտառ, վորը յեղբում եր այդ բլրաշտու հարթավայրը։ ամառը, կեսօրվա այրող տապի ժամանակ, անտառի խորքում հով եր լինում, զգացվում եր խոնավ հողի բույրը, և մարդու վոտը թաղվում եր փտած և նույնպես խոնավ տերեների կույտերի մեջ։ Արեւ գծվարությամբ եր թափանցում խիտ սաղարթի միջով,

ու միայն յերբեմն նրակ ճառագայթն աղաման-  
դի նման առկայծում եր արագահոս առվակի  
վրա, վորը կարկաչում եր առատ քուսակա-  
նությամբ ծածկված ձորակում... Աներեվա-  
կայելի լուսություն և ամայությունն եր թագա-  
վորում այստեղ. անտառը, կարծես, խորա-  
սուզված եր կախարդական յերազում։ Գա-  
զաններն ու թուչուններն ազատ բնակություն  
եյին հաստատել այստեղ։ Անտառը հարուստ  
եր պտղատու թփերով, արագավազ առվա-  
կը—ձկներով... Վոչ-վոք ձեռք չեր տալիս այդ  
հարստություններին, վոչ-վոք, կարծես, չեր  
մտածում նրանց մասին։ Յերկու-յերեք տար-  
վա ընթացքում, ամառը կամ աշնանը մեկ  
կամ յերկու անգամ մթին անտառից դուրս ել  
վազում մի շուն և դրանից մարդիկ զլիսի եյին  
ընկնում, վոր աղան վերադարձել և արտա-  
սահմանից և իր կալվածքներում վորսով և  
զբաղված։ Գլխակոր, ձեռները մեջքին, նո-  
քայլում եր առատ վորսից խենթացած շահ,  
հետքով և, ըստ յերեսութին, ինչ-վոր ձանձ-  
րույթ զգում, ինչ-վոր բան մտածում։ Հրո-  
ցանը գանդաղ յերերվում եր նրա մեջքին...  
ինչի՞ մասին եր մտածում աղան. անկասկած,  
շատ բանի մասին եր մտածում, սակայն նրա  
մտքերն, իհարկե, չեյին փոխում այդ վայ-  
րերի տիսուր դրությունը։ Չնայելով առատ  
բարիքին, վորը գտնվում եր անտառում, զե-  
տերում, աղայի իշխանության ներքո, չնա-

յելով դաշտի անծայր տարածության, այդ  
անտառները, զաշտերը, զետերը նույն տիսուր  
վիճակում եյին մնում, յերբ աղան գնում եր  
արտասահման (նա հիվանդ եր)։ Նրա լայնա-  
տարած կալվածքներում տեղ-տեղ յերեսում  
եյին աղքատիկ գյուղեր, նիհար անասուններ  
ու նիհար մարդ, վորն արդեն «գող», «չվճա-  
րող» եր կոչվում, վորովհետեւ իսկապես փոր-  
ձում եր գաղտնի խցկվել այդ վայրերը,  
ձեռք բերել փայտ, պտուղներ, ձուկ և «հա-  
սանելիքը» վճարում եր վոչ այլ կերպ, քան  
մտրակների հարվածների տակ։

Հարստությունը թափված եր և մոռաց-  
ված. վոչ վոքի հարկավոր չեր, այլ և անմատ-  
չելի յեր բոլորին։ Աղան կորցնում եր անտա-  
ռում վորս անելու ախորժակը, այն անտա-  
ռում, վորտեղ յուրաքանչյուր գնդակ դիպ-  
չում եր վորսին,—այնքան շատ եյին ամեն  
տեսակ կենդանիները։ Զմրանը դեղջուկը փայտ  
չեր ունենում, ցրտից կծկվում եր խարխուլ  
հյուղերում։ Նա ձեռները կապկապած դուրս եր  
բերվում անտառից, յեթե, իհարկե, պահապա-  
նը նրան տեսներ, կամ հրացանը թողած հե-  
ռանում եր, յեթե նույն այհապանը դլիսի յեր  
ընկնում, թե նա մտադիր է վորեւ թռչուն  
սպանել։

Ահա թե Ռասպոյասովոյի շրջանն ինչ  
դրության մեջ եր մոտ տասնվեց տարի առաջ։  
Ամեն ինչ շատ կար, բայց վոչ վոք չեր ոգաւ-

վում։ Աղան ձանձրանում եր ու տառապում մելամաղձոտությունից, գյուղացին տանջվում եր աղքատության ճանկերում և կորցնում լույս աշխարհում ապրելու ախորժակը։

Գյուղացիների աղատադրումը միանդամից վերջ տվեց աղայի և մուժիկի այդ յերկուստեք ճանձրույթին։ Այդ գեղքից հետո, յերբ ինչվոր բան անցավ գյուղացիներից պարուներին և պարոններից գյուղացիներին, իսկույն, թե առաջինների և թե յերկորդների մեջ յերեացին սեփականության զգացումների առաջին նշույները։ Հենց վոր աղայի անտառի կամ գաշտի մի մասն անցավ ուրիշն, նա գլխի ընկալի, վոր այդ «իրեն ե», և յերբ նույն բանը տեսավ գյուղացին, նա ել գլխի ընկալի, վոր այդ «իրենցն ե»։

«Իմը» և «մերը» զգացումներն այնքան նոր եյին այդ մելամաղձոտների համար, և այնքան տեղին եյին թե աղայի հոգու և թե գյուղացու հոգու և ստամոքսի համար, վոր «իմի» և «մերի» ախորժակը, — թե աղայի և թե գյուղացու, սկսեց մեծանալ վոչ թե որերով, այլ ժամերով։

Ռասպոյատովոյի շրջանի հին կառավարիչն այդ ժամանակ բավական յերջանիկ մի միտք հղացավ։ բանից դուրս յեկավ, վոր այդ վայրերը, վորտեղ վաղուց ապրում եյին ուսապոյատցիները, հենց շատ հարմար են մի ինչվոր բանի համար, վոր յեթե այդ ինչվոր

բանը «կլորացնենք» մի այլ ինչվոր բանի հետ, առաջվանից չորս անգամ ավելի յեկամուտ կոտացվի։ Դրա համար միայն հարկավոր ե ռասապոյատովցիներին գաղթեցնել մի այլ վայր, վորտեղ ամեն ինչ նրանց համար «շատ ավելի լավ կլինի»։

Կառավարիչն իր այս պլանը հաղորդեց աղային։ Վերջինս թեև յերկար ժամանակ տատանվում եր, բայց «իմի» անիծված, առաջներում բոլորովին անծանոթ ախորժակը նրան հասցրեց այնտեղ, վոր նա գիտակցեց, թե այդ իր սեփականությունն ե։

«Աստված վկա, այդ իմն ե», — ավելի և ավելի հաճախ եր մտածում նա, յերբ հարկավոր եր վորեւ վորոշում կայացնել կառավարչի առաջարկի նկատմամբ։ Վերջապես, նա գնաց արտասահման և կողանից գրեց կառավարչին, վոր նա վարվի այնպես, ինչպես ուղում ե, և անի այն, ինչ վոր «լավ ե»։

Կառավարիչը դործի անցավ, «մերոնք» հույնակես բարկացան, սկսվեց իրարանցումը։

Սաստիկ բարկացան «մերոնք»։ Տու ու գմփոցի և հաղթության ծարավը, վորի նպատակն եր բավարարել ստամոքսի միանդամայն բնական պահանջները, ավելի սաստկացավ լավագույն կյանքի այն ցնորդներով, վորոնք, կարծես, նույնպես արթնացան աղատադրման մոմենտին։ Այդ ցնորդներն անորոշ եյին, անում եյին հին որերի մասին անատամ հին ծերուկների պատմածների ազգեցությամբ, լը-

բացվում եյին անցորդ-ուխտագնացի, փախած  
զինվորի խրատներով։ Բայց իրիկնաժամերին,  
գյուղացու խրճիթի թանձը խավարում, յերք  
նա լսում եր զինվորների և ուխտագնացների  
այդ պատմածները, անձնատուր եր լինում ցը-  
նորքներին, վրոնք թեև անորոշ եյին, բայց  
նրա մտքերը տանում եյին գեպի վե՛ր, խրճի-  
թից հեռո՛ւ և հեռու։ Այնքան հեռու եյին տա-  
նում, վոր գեղջկուհին իր մանկանն որորելու  
ժամանակ դադարում եր յերգել տխուր այն  
յերգը, թե «նանիկ արա, սիրուն բալա, տակիդ  
չորր—յերեք տարվա», — և դիմում եր մանկա-  
նը հետեյալ խոսքերով, զրեթե հավատալով  
նրանց, — «կմեծանաս, մեծ կղանաս, վոսկի  
հաղած պիտի ման գաս...»։ Սրանք եյին  
Ռասպոյասովոյի գեղջուկի բոլորվին անի-  
րագործելի յերազները, ձմբան մութ ու մոայի  
յերեկոներին թեավորվող յերազները։ Նրանք  
այնքան վեր հանեցին Ռասպոյասովոյի բնա-  
կիչների հոգիները, վոր այդ բնակիչները վըճ-  
ռեցին առաջիկա ճակատամարտում չինա-  
յել իրենց ուժերը, վրովհետև կարծում եյին,  
թե «մեր գործն արդար ե»։

— Պատրաստվե՛ք, տղերք, — ճշում եյին  
նրանք, — վոչինչ մի խնայեք, հանեցե՛ք քը-  
սակներդ, մեկին յերեք կիբերադարձնենք  
ձեղ... Ե՛յ, ծերուկ, ով հոգեպահուստ փող ու-  
նի, թող բերի... հասարակություն... Մի հա-  
վատարիմ մարդ պետք է ուղարկել քաղաք։ Ա՛յ

Պարմեն պապի, պաշտպանի՛ ժողովրդին,  
թևերդ քշտիր ու անցիր գործի։

— Խիզճ արեք ինձ, ուղղափառնե՛ր, —  
ասում եր Պարմեն պապին, ութսուն տարե-  
կան ծերուկը, — ո՛ֆ, մեջքս կռացել ե, ուժ  
չկա։

— Հարկի՛ ես վորբերի արցունքները, —  
պնդում եյին Ռուսպոյաս վցիք, — քեզնից բա-  
ցի ով խելք ունի։ Մենք մութ մարդիկ ենք,  
կարգին լույս աշխարհ ել չենք տեսել։ Դու հին  
մարդ ես, ուրեմն ամեն բան տեսնում ես, ինչ-  
պես գրքի մեջ գրածի պես... պաշտպանի՛ ը  
մեր կյանքը։ Պապի ջա՞ն, պապի՛։ Վախեցի՛ ը  
աստծոց, մի թող մեզ նեղացնեն...»

— Ո՛ֆ—ո՛ֆ, խղճացեք ես իմ չորացած  
վոսկորները, զավակնե՛րս, ո՛ֆ—ո՛ֆ...»

— Պարմեն պապի, — աղերսում եյին  
Ռասպոյասովոյիները, — բա դու չե՞ս ցավի,  
յեթե մեր գյուղացիք բնալեր լինեն։ Չե՞ վոր  
բոլորս կկոտորվենք..»

Յերկա՛ր ժամանակ աղաղակում եր ամ-  
րոխը յերկա՛ր ժամանակ, արցունք թափելով,  
նրանից պաշտպանվում եր ծերուկ պապին,  
բայց, վերջապես, անձնատուր յեղավ։

— Ե՛հ, ի՞նչ արած, — ասաց նա, փորձե-  
լով ուղել մեջքը և ջլուտ, կնճոռտ ձեռով  
սրբելով աչքերը, — վոր եղպես ե, ուրեմն առ-  
տծո կամքն ե, ուրեմն ելի՛ նեղություն պիտի  
քաշեմ ես ծեր հասակում։

— Հույս-տոտված, մեր գործն արդար  
ե...

— Յերեսում ե, վոր տեր, վողորմած Նի-  
կոլա հայրն եղանակ բարեհաճել, կզնամ:

— Աստված քեզ ուժ տա, թող քեզ  
ողնական լինի յերկնային թագուհին, — ձայ-  
նում եր վոգեռված ամբոխը:

— Փող կտաք թե չե, հիմի ասում եմ,  
ձեր վոչ մի կոպեկը չեմ ուտի..

— Պապի, այս պապի, մեղք չի՞, վոր քեզ  
պես ծեր մարդն եղանակ խոսք ե ասում... —  
Հանդիմանում եյին ռասպոյասովցիները, —  
Վարդիր քո խելքով, վոնց վոր աստված քեզ  
ցույց տա... վնա, տերը քեզ հետ, պաշտպա-  
նիր մեզ:

Յեվահա ծերունի պապը, մաղախը շալա-  
կին, յերկար մահակը ձեռին, սկսեց որորվե-  
լով քայլել նիհար ու բարակ վոտներով, գնաց  
«կովելու» արդար գործի համար: Նա հագել  
եր հաստրակության հաշվով ձեռք բերված  
տրեխներ: Պետք ե խոստովանել, վոր նա չեր  
յեղել քաղաքում վաղուց, այն ժամանակնե-  
րեց սկսած, յերբ նա բանտարկված եր այն-  
տեղ: Այդ քառասուն տարի առաջ եր: Բանտից  
ուղղակի Սիբիր գնաց: Նրան մանիֆեստով  
ներում չնորհվեց, նա վերադարձավ Սիբիրից  
ու այնուհետև չերևաց քաղաքում, մոռացավ,  
քաղաքի կարգերը: Իսկ այդ կարգերն արգեն-

խիստ փոխվել եյին. վերացել եր գրագիրը,  
վորն առաջված ժամանակներում կաշառք վերց-  
նելով, անում եր այն, ինչ վոր ուղենար,  
ինչ վոր կարելի եր անել փողի գումարի հա-  
մեմատ: Պարմենին մի բան եր մնում անել, —  
Հույս դնել աստծո վրա, նրա վողորմա-  
ծության և ցուցման վրա: Վորպեսզի  
իր գործը հաջողակ գնա, նա ամբողջ որերով  
ինչ վոր կարելի եր անել փողի գումարի հա-  
տըծո գութը շարժել պահքով, իսկ հասարա-  
կության փողերը յեռանդով բաժանում եր  
նրանց, ով խոսք եր տալիս պաշտպանել ուսո-  
պոյասովցիների գործը: Պարմենն արտասվա-  
թոր աղերսում եր չփառացնել այդ գործը...

Սակայն այն ժամանակ, յերբ ծերուկ  
Պարմենը պաս եր պահում և արտասուք թա-  
փում իրենից փող վերցրած մարդկանց առաջ,  
աննկատելի կերպով անցան խնդրագիր տա-  
լու, վորոշումը լսելու, անհամաձայնություն  
հայտնելու, դատարանին վերադատության բո-  
զոք տալու որինական ժամկետները: Անցան  
այդ մանր մունք բաները, յերեկի այն պատճա-  
ռով, վոր Պարմենն այդ չփառեր, չեր կարող  
իր աղոթքներում հիշել նրանց, կամ այն  
պատճառով, վոր այդ գործերին տեղյակ  
վորեւ մեկին ձեռնտու յեր լրեւ, նրանց մասին  
վոչինչ չասել տղետ գեղջուկին: Յեվ գործն  
այնպես եր լինում, վոր նահանգական քաղա-  
քից վերադարձած Պարմենը թեև հայտնու

Եր հասարակության, վոր ամեն ինչ, փառք աստծո վերջացել ե, հրամայված ե սպասել «զաղտնի չինովնիկին», վորը գործը շուռ ե տալու «նրանց դեմ», — հանկարծ գալիս եր գավառի վոստիկանապետը կամ պրիստավը և հայտարարում, թե —

—Այսինչ հատորի, հողվածի հիման վրա և հողվածի... հատորի... որենսդրքի... հիման վրա... և հատորի... հողվածի... կետի առթիվ տասնհինգերորդ ծանոթության հիման վրա... վրոշված ե. — հայտարարել Յասպոյասովոյի գյուղացիներին, վոր նըրանց խնդրագիրն անհետեանք ե թողնյում, վերադարձում ե ժամկետը բաց թողնելու պատճառով, և «լորոշումը» մտնում ե որինական ուժի մեջ..

Քանի վոր Պարմենի բացակայության ժամանակ գյուղացիները նույնակա իրենց հույսը դրել եյին աստծո վրա, իսկ իրենց արդարացիության համոզմունքը բաղառապես հիմնված եր աշնանային, ձմեռնային մությերեկոների ու դիշերների յերազանքի վրա, ուստի կարդին չհասկացան չին վնիկի կարդացածը: Սակայն նրանք գլխի եյին ընկնում, թե թղթի մեջ վոչինչ չի ասված գործը «նըրանց» դեմ շուռ տալու մասին, ինչպես խոստացված եր, ուստի ասում եյին, վոր այդ թուղթը «են չե», վոր այն չեն ստորագրի...

— Համաձայն չե՞նք, — ասում եյին նըրանք:

— Համաձայն չե՞ք;

— Չե՛ ու չե: Եղ թուղթը կեղծ ե: Չե՞ վոր տրդար ե մեր գործը: Ենպես չի՞, Պարմեն պատի:

— Թուղթը կեղծ ե, տղերքս, են թուղթը չի, մերը չի: Վերցրու այն, աղա, ու գնա վորտեղից յեկել ես.

— Ուրեմն համաձայն չե՞ք, — նորից հարցնում եր յեկվորը:

— Հերի՛ք ե աչքակապություն անես, — պատասխանում եր ամբոխը, — վերցրու քեզ եղ թուղթը, մեզ պետք չի: Կեղծ ե:

Յեկվորն այս բոլորը մտցնում ե արձանագրության մեջ: Հատկապես Պարմենին մանրամասըն հարց ու փորձ են անում, հետո այդ բոլորը գրում են մի քանի թերթերի վրա և ուղարկում ուր հարկն ե: Մասպոյասովցի մուժիկը տանում ե այդ թուղթը ուր հարկն ե, ասպանզակում ե ձին: Մասպոյասովցի մեկում մեկնում ե նաև չինովնիկը: Մասպոյասովցիները չդիտեն, վոր իրենց տղիտության պատճառով, բաց թողնելով ժամկետը, հիմա ել նոր գործի մեջ են խրվել: Ընդհակառակը, այդ «կեղծ» թղթից հետո նրանք, կարծես, ավելի վճռական են դառնում այն զարերության նկատմամբ, վորը պետք ե անեն իրենց արդար գործի համար:

— Դե՛ս, տղերք, թափ տվեք գրպաննեւըդ, սիրոներդ պինդ պահեք, գլուխներս կտանք, ամոռթով չենք լինի: Հո չե՞նք կորչելու...

— Ինչո՞ւ կորչենք, ունես-չունես, տուր, պրծանք գնաց:

— Պարմե՛ն պապի, ելի՛ վոտդ քաղաքցի, քեզ մատադ: Քեզանից բացի ո՞վ կանի:

— Դու արդեն գնացել ես, դիտես:

— Ե՛ս, թող մեռնեմ մերոնց համար... փող-մող հավաքեցեք ճանապարհի համար... ձեզ եմ տալիս ես իմ ծեր կյանքը, միայն թե աղոթեցե՛ք աստծուն, վոր թողություն տա մեղքերիս... Կարելի յե իմ մեղքիցն եր, վոր թուղթը կեղծ դուրս յեկամ մեր դեմ... Մնա՛ք բարով, ուղղափառներ... Ավել-պակասը ներեցեք:

Ու Պարմենը գնում ե նորից, կարծես, ել ավելի յերկար, ել ավելի նիհար: Նորից աղոթում ե աստծուն և պաս ե պահում և... ավա՛ղ, չի վերադառնում: Պարմենին փնտուելը հանձն ե առնում տիրացուի տղան, վորը ծառայել նահանգական քաղաքում, ինչ-վոր մի ատյանում և, իր ասելով, գիտի բոլոր գործերի կարգը: Նա առաջարկում ե քաղաք գնալ, խոսք ե տալիս գործը կատարել շուտ և եժան: Գյուղացիները մի փոքր մտածերուց հետո նրան ել են փող տալիս, բայց նրան մենակ չեն ուղարկում, այլ իրենցից ուղեկցող են տալիս, վորովհետեւ այդ մարդը թեև լավ գիտի թղթի

գործը, գրագրությունը, բայց ամբողջ Ռառպոյասովոյին վազուց հայտնի յե, վորակես հարբեցող և անհուսալի մարդ: Մեկնելուց առաջ նրան խորհուրդ են տալիս հիշել աստղուն, հիշել վորբերի արցունքները... և այն:

Կաշառք տալու և հյուրասիրելու համար տիրացույի տղան չի խնայում հասարակության փողերը: Իջևանի մի սենյակում, վորտեղ նա զտնվում է իր ուղեկից գյուղացու հետ, արդեն մի քանի որ անընդհատ տեղի յե ունենում հարատև հարբեցողություն և այնպիսի վայրագություն, վոր պատգամավորն ու ուղեկիցը զարմանում են այդ պարունների վրա ու «սարսում»: Նա փորձեց խոսել «մեր» գործերի մասին, բայց տիրացույի տղան, հարբած լինելով, միայն, հայհոյեց նրան ու, կարծես, նույնիսկ ապացուցեց, վոր «մեր» գործը վաղուց ջուրն ե ընկել, վոր ել գլուխ ցավացնելու կարիք չկա, վոր վաղուց ամեն ինչ չուր ե յեկել «մեր» գեմ: Սակայն առավոտը նա ուշքի յեկավ և մուժիկին առն ուղարկեց, ասելով, վոր ինքը, տիրացույի տղան, քաղաքում պիտի սպասի ինչ-վոր թղթի, վորտեղ և գրված կըլինի, ինչ վոր հարկավոր ե...

Ու ելի թուղթ ե գալիս, ու ելի այդ թուղթը բերում ե արիստակը, ու ելի այդ թղթում «ենակ» չի գրված»: Դուրս ե գալիս, վոր այն ժամանակ, յերբ գյուղացիք զարմագալ եյին

անում Պարմենի հետ, վերջինիս յերկրորդ ճանապարհորդության մասին, այն ժամանակ, յերբ տիրացույի տղան քաղաքում հարեցողությամբ եր զբաղված, ելի «լրացավ» ինչ-վոր մի ժմակետ, որ կամ ժամ, վորի ընթացքում կարելի յեր վորեւե բան անել, բայց վորից հետո արդեն գործը բոլորովին «փչացավ»:

— Դրա համար յես ձեզ ասում եմ, իբրև ազնիվ մարդ, գաղթեցեք կամավոր կերպով...—ասում եր պրիստավը,—եղ ավելի ձեռնտու յե ձեզ համար: Իսկ յեթե շարունակեք համառել, են ժամանակ... և այլն:

Չնայելով, վոր բոլորովին ճիշտ եր պրիստավի ասածը, ուսապոյասովցիք տեսնում ենին, վոր այդ բոլորովին «են չե», ինչ վոր իրենց հարկավոր ե, ու դարձյալ չհամաձայնվեցին:

— Ուրեմն համաձայն չե՞ք՝

— Չե ու չե: Համաձայնություն չենք ասլիս:

— Չե՞ք ստորագրի:

— Ասոված մի արասցե...

— Բայց չե՞ք վոր ձեր գործը չի հաջողվել:

— Եղ ուրիշ թուղթ ե:

— Կե՞ղծ ե...

— Ինչպե՞ս ե քո ազգանունը: Այդ ո՞վ սասց «կեղծ ե», արի այստեղ, ո՞վ ես դուք

— Տղերք, չասեք ով եր...

— Իիիի՞՞նչ...

Աղմուկի մեջ գրվում ե մի նոր արձանագրություն, ուսապոյասովցի մի նոր մուժիկ տանում ե այդ թուղթը, ուր հարկն ե, ասալանդակելով ձին: Պրիստավը նույնպես գնում ե Ռասպոյասովոյի ձիերով:

Այդ յերկու անսպասելի հարվածները, այդ յերկու թղթերը, վորոնք այնքա՞ն դաժան կերպով կործանեցին ուսապոյասովցիների հույսերը, այնքա՞ն փող կլանեցին, այնքա՞ն հերազները խորտակեցին, առաջին բոպեցին այնպես են ցնցում ուսապոյասովցիներին, վոր սրանք չգիտեն ինչ անեն: Զկա՛ մեկը, վորին դիմեն, իմանան, թե ինչ պիտի անել: Տիրացույի տղան կորավ, Պարմենը կորավ, վոչ-վոք վոչինչ չգիտե: Ստարշինան ծոռւմ ե «նրանց» կողմը, կեղծ թղթի կողմը: Ի՞նչ անել: «Լավ, մի՞թե ճշմարտություն չկա աշխարհում... հիմի առաջվա ժամանակը չի...»: Յեկ հենց վոր ճշմարտության վերաբերյալ այս միտքը մտնում ե ուսապոյասովցիների գլուխը, նրանց մոլորվածությունը փոխարինվում ե պայցքարի ծարավով, վոր հարյուր անգամ ավելի ուժեղ ե առաջին յերկու փորձերի ժամանակ ունեցած ծարագից:

— Բա աշխարքում ճշմարտություն չկա՞՝, հոխորտում ե վորեւ մի «պարագլուխ», հանկարծ, ո՞վ գիտէ, վորտեղից յերեալով, պինդ կացեք, տղերք, մեկ ե, պիտի մեռնենք:

— Տուր վերջին հոգեպահուստդ, կարելի  
յե գտնվի ճմարտությունը...

— ԶԵ՞ վոր յերկնքում աստված կա:

— Բերե՞ք, ինչ վոր կարող եք, տղերք,  
դե՛հ, ձեռք ձեռքի տանք:

Ուսպոյասովցիների կյանքում այդ մո-  
մենտը զի յեր այնպիսի զարմանալի անձնու-  
րացությամբ, վորպիսին լինում ե միայն  
ամենավճռական բովեներին: Դուրս քաշելով  
այն ամենը, ինչ վոր «մնացել եր», «տալով  
վերջին չունջը», ծախելով կովերն ու վոչ-  
խարները, ուսպոյասովցիք հասան մինչև  
Մոսկա, վորը նրանց ավելի բարձր եր թը-  
փում նահանգական քաղաքից, հասան մինչև  
Պետերբուրդ, յերբ Մոսկան արդեն «գործը  
տակովն արավ»: Յերբ Պետերբուրգում ել  
գործն սկսեց վատ գնալ, նրանք մտածեցին,  
վոր այնտեղ դեռ չեն գտել գործի իսկական  
տեղը, ու սկսեցին հասնել մինչև սենատ և այլն  
ու... ընկան բանտ:

Տանը մնացած ուսպոյասովցիներն ան-  
նըկուն հավատով սպասում եյին գործի հե-  
տեանքին: Զեր լինում պատահմամբ նրանց  
գյուղից անցնող մի մարդ, վորին հարց ու  
փորձ չանելին, գառ չնվիրելին, վորպեսդի  
նա ասեր գիտեցածը: Դրանք, իհարկե, վոչինչ  
ել չգիտելին:

— Վորտե՞ղ են ձեր թղթերը, — հարցնում  
եր հետաքրքրվող անցորդը:

— Թղթերը Պարմենին ենք տվել:

— Իսկ Պարմենը վորտեղ ե:

— Նահանգական քաղաքում:

— Իսկ ո՞ւր ե այսինչ թուղթը:

— Տիրացույի տղան, Անտիպկինն և  
վերցրել:

— Իսկ նա ո՞ւր ե:

— Զենք իմանում:

— Իսկ այսինչ թողեղթը:

— Այսինչ թուղթը չի յեղել:

— Գետք ե լինի...

— Կարելի յե Պախոմկայի մոտ ե...

Պախոմկայի մոտ անցած որը յես մի թուղթ  
տեսա:

— Ի՞նչ Պախոմկա, ախալեր, Ուաղիկոնի  
մոտ ե: Ուաղիկոնն ասում ե, թե իր մոտ ե,  
հասկացա՞ր:

— Ի՞նչ ես զուրս տալի, Ուաղիկոնինը  
ծաղիկ կտրելու թուղթ ե:

— Կարելի յե լինի...

— Ուրեմն չկա՞ն թղթերը:

— Ուղիղն ասած՝ մեղ մոտ չկան թղթերը:

— Ե՛հ, ուրեմն վոչինչ ել չի կարելի  
անել:

— Վոչի՞նչ:

— Վոչինչ չի կարելի...

Մեծ մասմբ այսպես եյին պատասխա-  
նում բոլոր նրանք, ովքեր հասկանում եյին

կամ ուզում եյին հասկանալ գործը։ Ամեն  
անգամ, այդպիսի հարց ու փորձից հետո,  
ռասպոյասովցիք ավելի եյին տիրում և ե՛լ  
ավելի զդում տգիտության յերկաթե ուժը,  
զդում, վոր անգոր են պատուել «ժամկետների»,  
«վերադատության», «վճռաբեկության»,  
«պատճենների» այդ վոստայնը։ Շնորհակա-  
լություն, մե՛ծ չնորհակալություն անցնող  
ուխտվորներին, ծառայությունից արձակ-  
ված զինվորներին և այլ անցորդ մարդկանց,  
վորոնք նույնպես, ինչպես և ռասպոյասով-  
ցիք, վոչինչ չեյին հասկանում այդ գործից։  
Նրանք միշտ ասում եյին, վոր ռասպոյասով-  
ցիների գործը արդար ե, վոր ինչպես ուզես,  
կարելի յե շուռ տալ այդ գործը, վոր բավա-  
կան ե միայն ամելի բարձր իշխանության  
մոտ գնալ ու պրօմ'վ, —մի թուղթ կորեն և  
միանդամից շուռ կտան ամբողջ դավառը։  
Զինվորներն առանձնապես վառ կերպով եյին  
նկարագրում հաջողության հնարավորու-  
թյունը։ Նրանք իրենք յեղել եյին Պետերբուր-  
գում, տեսել ամեն ինչ, գիտեն։ «Պետերբուր-  
գում ո՞վ ե պրիստավիի ունիսին մտիկ անողը,  
ենտեղ յերկու պրիստավը մի կոպեկ՝վ են  
ծախվում»։ Այդ լուրերը շաքարի նման հալ-  
վում եյին ռասպոյասովցիների սրտերում...  
Մի անգամ Միրոն Պետրովը, Ռասպոյասովոյի  
մուժիկ, վորը գնացել եր սուրբ յերրորդու-  
թյան վանքը, նույնպիսի մի լուր բերեց Պե-

տերբուրդ ուղարկված սուրհանդակներից, վո-  
րոնց նա, սակայն չեր պատահել, այլ իմացել  
եր, թե կայարանում մի վոմն ասել եր մի վա-  
ճառականի իրենց գործի լավ ընթացքի մասին,  
վաճառականն ել այդ բոլորը պատմել ե Պար-  
մենին, ինքն ել անծանոթ ե յեղել...

«Յերեկի բարի վաճառական ե», — մտա-  
ծում եյին ռասպոյասովցիք։

Բայց մինչև վոր տեղի յեր ունենում այդ  
հարց ու փորձը, պատմությունը, մինչև վոր  
ռասպոյատովցի մուժիկներն ետապով, դան-  
դաղ ուղարկվում եյին իրենց գյուղը, բոլոր  
ժամակետերն անցան վերջնականապես և ան-  
դարձ։ Աշնանը գավառական վոստիկանապետը  
սեփական կառքով ժամանեց գյուղը և շատ  
կարծ ու կտրուկ հայտարարեց, վոր ռասպո-  
յասովցիները վաղվանից պետք ե զաղթեն։

Նա կարդաց այն բոլոր թղթերը, վորոնք  
յերեկե ներկայացրել եյին ռասպոյասովցիք,  
կարդաց Պետերբուրդ ուղարկած թղթերի վե-  
րաբերյալ վորչումն ու կրկնեց, թե այդ բո-  
լորից հետո ամելորդ ե խոսել։ Իսկ յեթե ռաս-  
պոյասովցիներն առաջվա պես շարունակեն  
համառել, — սիլելացրեց նա, — ապա վոստի-  
կանությունը նրանց կղաղթեցնի իրենց հաշ-  
վին, իսկ այժմ բանվորներ—ինչքան ուղես,  
վորովհետեւ աշուն ե։

Ռասպոյասովցիները վոչինչ չեյին հաս-  
կանում։

Գավառական վոստիկանապետն եղի՛ գործը պարզաբանեց սկզբից մինչև վերջը. այսուամենայնիւ նրանք վոչինչ հասկանալ չեյին կարող:

Յերրորդ անգամ նրանց ամեն ինչ բացառըվեց ու ապացուցվեց: Յերրորդ անգամ ևս նրանք չեյին հասկանում ու չեյին հավատում:

Նրանք ուշքի յեկան ա՛յն ժամանակ միայն, յերբ նրանց առաջարկեցին ինչ-վոր թուղթ ստորագրել: Այստեղ նրանք ելի՛ կեղծիք տեսան և հրաժարվեցին ստորագրելուց:

Ու ելի՛ յերեք անգամ հանգամանորեն պատմվեց ամբողջ գործը, ու ելի՛ առաջարկվեց ստորագրել, ու ելի՛ նրանք չշարժվեցին տեղերից և համաձայնություն չտվին:

Կազմվեց յերրորդ արձանագրությունը և յերրորդ ռասպոյասովցի մուժիկը տարախ, ուր հարկն ե, ասպանդակելով ձին:

«Ստորագրելու» առաջարկը, վորը ռասպոյասովցիներին հիշեցրեց յերկու այդպիսի «կեղծ» առաջարկ, և այն համառությունը, վորով նրանք «պաշտպանեցին» իրենց իրավունքները և չստորագրեցին թղթերը, կարծես, մի փոքր հուսագրեցին նրանց, վորդեռ կլինեն լավ նորություններ, վոր չուտով կդան Պետերուրդ մեկնածները, կդան ինչ-վոր «ուրիշ» չինովնիկներ և շուռ կտան գործը:

Սակայն հետեւյալ որը, արևածագին, Ռասպոյասովցո յեկան ութսուն մարդ, վորոնք հավաքված եյին բոլոր շրջակա գյուղերից:

— Ե՛հ, ի՞նչ կա, տղերք, բարով եք յեկել, — ասացին ռասպոյասովցիները:

— Բարե, մեզ վարձել են...

— Հ՛մ, գաղթեցնելու համար ե...

— Յեկել եք մեզ բնավե՞ր անելու:

— Գործը վոնց վոր եղակա լինի:

— Լավ ե, հաս' :

— Բա վո՞նց անենք. որական ութսուն կողեկ են տաշիս... ինքներդ դատեք:

— Լավ գին ե...

— Մենք ի՞նչ անենք, ինքներդ գիտեք, վոր...

— Եղ եղակա ե, որական ութսուն կողե՞կ...

— Ութսուն...

— Հ՛մ, բավական ե...

Այս գեղքը միանգամից կործանեց Ռասպոյասովցի բոլոր հույսերը: Փորձանքն ավելի ահավոր դարձավ, յերբ բանվորներից հետո յեկավ գավառական վոստիկանապետը և հայտնեց, թե բանվորները վարձված են ռասպոյասովցիների հաշվին և, յեթե վերջինները կամավոր կերպով չկատարեն այն, ինչ վոր պետք է կատարեն, ապա բանվորներն իսկույն գործի կանցնեն:

Բովեն ծանր եր ռասպոյասովցիների համար: Հույսերն ու ցնորդները վերջնականապես կործանվել եյին: Ռասպոյասովցիները վոչինչ չեյին կարողանում հասկանալ իրենց այդ անհաջողությունից և փոխանակ զայրանալու, աղմկելու, կատաղելու (վոր սպասում եր գավառական վոտիկանապետը), նրանք բոլորովին ընկճվեցին, հուսահատվեցին, բոլորովին անտարբեր դարձան դեպի ամեն ինչ: «Կոտորվենք»—այս եր գրեթե բոլոր ռասպոյասովցիների միակ ցանկությունը. «մեզ համար մեռնելն ավելի հեշտ ե»—այսպես եյին պատասխանում իրենց անմիտ համառության նոր ու ակներև ապացույցներին: Ու նրանք գործը վերջնականապես տանուլ տվին:

Ժողովրդի այդ քարացած դրության դեմ կովելու իր բոլոր ջանքերն սպառելով, գավառական վոստիկանապետը վերջապես հրամաց:

— Քար ու քանդ անե՞լ:

Բանվորները գործի անցան:

Յերեք շաբաթ շարունակվում եր Ռասպոյասովոյի տների ավերածությունը: Յերեք շաբաթ գյուղի վրա թանձր մառախուղի պես կանգնած եր կտուրների շուր տված հարդի, ջարդված վառարանների փոշին: Յերեք շաբաթ Ռասպոյասովոյից մեկնում եյին սայերը, վորոնք բեռնված եյին գերաններով, շրջանակներով, կտուրների տախտակներով,

դռներով և այլն և այլն: Գավառական վոտիկանապետը կորել եր փոշու մեջ և հոգնածությունից հաղիվ եր քարշ տալիս վոտները: Նրա ձայնը բոլորովին կտրվել եր, —այնքան շատ եր աշխատանքը:

Ռասպոյասովցիները լուս, վորպես քարեալրձաններ, դիտում եյին այդ ավերածությունը: Իսկապես, նրանք, կարծես, քարացել եյին, վոչինչ չեյին ուտում, վոչինչ չեյին տեսնում ու լսում:

— Յերեխային մի կողմ տար, ապուշ, — վոռում եր գավառական վոտիկանապետը Ռասպոյասովցի կնոջ վրա, — հիմարի գլուխ, չե՞ս տեսնում, վոր կտուրը փուլ ե գալիս...

Կինը կանգնած ե ու չի լսում... աստված միայն փրկեց յերեխային. կտուրը հենց նրա մոտ փուլ յեկավ:

— Հլա մի տե՛ս, — քըթմնջաց ռասպոյասովցին, տեսնելով, թե ինչպես գերանն ընկալ յերեխայի մոտ:

Մի այլ տեղ, յերբ քանդվող տնից լսվեց կնոջ ցավագին մի ճիչ, վոչ վոք չշարժվեց տեղից: Բանից դուրս յեկավ, վոր այնտեղ պառկած եր յերկունքով բռնված մի կին...

— Ուղղափառնե՛ր, — դիմում եյին թանվորները ռասպոյասովցիներին, — ողնեցեք, վոր ծերուկին վար իջեցնենք վառարանից, ի՞նչ եք փայտի պես կանգնել, սատանանե՛ր:

Այս առաջարկին ևս վոչ վոք չեր պատաս-

իսանում։ Բոլորի համար «միենույնն եր», բոլորը, կարծես, քարացած եյին։

Յերեք շաբաթից հետո Թասպոյասովոն այսպիսի մի տեսարան եր ներկայացնում։ Կտուրներից թափած ծղոտը փռված եր այնտեղ, ուր առաջ կային տներ, շտեմարաններ, մարագներ։ Տներից մնացին թմբեր, նկուղներից—փոսեր, մարագներից—այստեղ ու այնտեղ ցցված սյուներ։ Յեվ հարդի այդ կույտերի միջև անսունները մոլոր թափառում եյին, իզուր աշխատելով մի կերպ գրավել տիրոջ ուշադրությունը։ Նույն կույտերի մեջ յերեխաններն եյին խաղում ու քնում ծնողների հետ, վորոնք գյուղի ավերման հենց առաջին որվանից չեյին հանվում, սպիտակեղենն ու հագուստը չեյին փոխում։ Ի՞նչ եյին ուտում, —դժվար ե պատասխանել։ Նըրանք հազ չեյին դանում ու բերք չեյին հավաքում։ Գետի ափին այստեղ ու այնտեղ յերեվում եյին հողում թաղված վառարաններ, վորոնցից յերբեմն ծուխ եր բարձրանում։ Կանայք զբաղվում եյին այդ վառարանների շուրջու։

Թասպոյասովցիք չեյին գաղթում նոր վայրերը ե առաջվա պես մտածում եյին, թե «ամենի լավ ե մեռներ»։

Աշնանային անձրեններն սկսվեցին... Թասպոյասովցիներն ասում եյին մեկ-մեկու...

— Ե՛կ, տղերք, մահը մեր գուռն ե ծեծում։ Հողիներդ տվեք աստծուն... մեռեք։ Յեվ այնուամենայնիվ չեյին հեռանում չին վայրերից։ Հիվանդ մանուկների հետ միասին տանջվում եյին նրանք թաց հարդի մեջ, փոսերում, վորոնք մնացել եյին նկուղներն ու վառարանները քանդելուց հետո։

Յեվ իսկապես, սկսեցին մեռնել։ Վերջապես, նրանց բոլորին դատի տվին։

#### IV

«Ժամկետը» բաց թողած ռասպոյասովցին բոլորովին ընկճվեց հոգեպես։ Նա կորցրեց ամեն ինչ։ Նա չգիտեր գործի եյությունը, տիմար եր, տղետ, և տիմարության գիտակցությունը անդրադարձ նրա բնավորության վրա, —ռասպոյասովցիք ծայր աստիճան արհամարհում եյին մեկմեկու։ Նորվայրերում նրանք շան նման գզվում եյին և փոխադարձ վնասներ հասցնում։ Ամեն մեկի փոխադարձ վնասների յեր տեսնել կատարելապես համար անտանելի յեր տեսնել կատարելապես հիմարացած մեկ ուրիշի, վորն իր տգիտության ու անմտության շնորհիվ թե՛ ինքը կործանվեց և թե՛ ուրիշին կործանեց։ Ահա թե ծանվեց և թե՛ ուրիշին կործանեց։ Ահա թե ինչու, յերբ քննվում եր նրանց «համառություն», և անհնաղանդության» գործը, նրանք թյան և անհնաղանդության» գործը, նրանք մեղադրում եյին մեկմեկու, մեղադրում եյին Պարմենին, բոլոր նրանց, ով առաջինն եր

գոռում՝ «պաշտպանենք մեր կյանքը», «ղեհ, տղերք, պատրաստվեք», նրանց, ովքեր առաջին անգամ «պատրաստվում եյին»...

Իրեն համբերության ու աղքատության յերկարամյա պատմությունն ավարտելով սեփական տխմարության ու վոչնչության դիտակցությամբ, —վոչնչություն, վոր միշտ ազբի նման կարող ե դեն շպրտվել, —ուսապոյասովցին ներքուստ իրեն զզում եր բոլորովին կորած, փչացած, և սկսեց հարբեցողությամբ վատնել այն ամենը, ինչ վոր մնացել եր, սկսեց գողություն անել, այնքան լկտիացավ, վոր ուղղակի մոտենում եր անցորդ վաճառականին և ասում: —

— Հը՛, վաճառական, թեյի փող տո՛ւր:

— Ինչո՞ւ համար:

— Խ, սակցության համար: Քեզ համար եւ քի՞չ ե: Դեհ, ցնծա դեղին թղթադրամը:

Յեկ ահա բարոյական անկման հենց այդ րոպեյին, յերբ ռասապոյատովցիները կարող եյին խեղդվել ամենածայրածեղ աղքատության ծովում, յերբ նրանց համար աշնանային ամենադժվար ժամանակն եր, յերբ հարկավոր եր վճարել ապառքը, —յեկավ իվան կուզմիչը: Յեկավ նա փոքրիկ կառքով, կառավարչի հետ: Բայ յերեսութին նրանք չըջում, դիտում եյին դավառը: Զին ազատ ու թեթե քայլում

եր ճանապարհով: Իվան կուզմիչը պարզ և ուղղակի գնահատում եր, թե «ինչը ինչ արժե», և շուտով լուր տարածվեց, թե վաճառականը աղայից գնել ե «ամեն ինչ», —թե մթին անտառը, թե գետերը, թե դաշտերը: Շուտով նոր-ռասպոյատովցիներն իմացան, վոր իվան կուզմիչը իրենց ել ե «զնել»: «Հետիոտին որական հիսուն կոպեկ, ձիավորին մի ոռւրլի-ով ուզում ե այդ գնով տասնհինգ վերստ գնալ կայարան, այնտեղից բերել չոգեկաթսան, թող գնա»:

Իվան կուզմիչն այսպես հայտարարեց ժողովրդին:

«Մարդը-հիսուն կոպեկ», —ահա այն թեռիայի եյությունը, վոր նա բերեց ռասովոյատովցիան միջավայրը: Այստեղ չկար և վոչ մի դատողություն, թե վորն ե մերը և վորն ե ձերը: Այստեղ չեր կարող խոաք լինել վորիւե իրավունքի մասին: Կարծ ու կտրուկ, —ուզո՞ւմ ես հիսուն կոպեկ վաստակել, —դնա, չէ՞ս ուզում, —մի գնա: Այս բոլորը լավ եր ներքին իմաստը կորցրած ռասպոյատովցու համար բարոյական կատարյալ ջախջախումից հետո նա դեռ ուներ ձեռներ, վոտներ, մկաններ ու ստամոքս: Իվան կուզմիչին ել հենց այդ եր հարկավոր, յերբ նա ստամոքսի համար հատկադիր հիսուն կոպեկ և վոր գլխավորն ե, ոչի:

— Տղեսք. կտեղափոխենք, —ասում է յին

նրա գործակառաւրները, կանչելով ու հայտ-  
քելով ռասպոյասովցիներին, — կտեղափո-  
խենք, հենց միայն ողի խմելով:

— Աստված ձեզ շեն պահի... աղաղա-  
կում եյին ռասպոյասովցիները:

— Ողու համար մի մտածեք. ինչքան  
կուզես խմիր, միայն թե գործ արա:

— Գործը ենպես զշուխ բերենք, վոր  
քեֆդ գա:

Յեվ իսկապես, շուտով սկսվեց գործը:  
Հազար փիթանոց հրեշը, վերջապես, Մոս-  
կվայից հասավ յերկաթուղու կայարանը և,  
Մըջապատվելով ռասպոյասովցիների մասսա-  
յով, շարժվեց, վորպեսզի կենդանություն-  
տա մեռած գավառին: Նա լայն բացել եր իր  
անհեթեթ յերկաթե յերախը, կարծես, սպառ-  
նալով կլանել այդ ամբողջ առատությունը,  
վորը փոված եր նրա առաջ, կլանել այդ ցըն-  
ցոտիսավոր ամբոխը, վորը վիստում եր նրա  
չուրջը: Դանդաղ ու ահավոր նա առաջ եր  
շարժվում, մերժ կանգ եր առնում զառիթափ  
վերելքում, մերժ նրա տակ ճքքում ու քանդ-  
վում եր փիթած կամուրջը: Գջլոված, հոգնա-  
ծությունից խելահեղ ճիերի վրա իջնող մը-  
տրակների հարվածը, ողուց խենթացած ռաս-  
պոյասովցիների գոռոցը, վորը խոպոտ եր,  
կարծես, զուրս եր գալիս բոլոր աղիքներից,  
ի յեր հիշոցներով, յերգերով, — այս ամենն  
ամպի պես կոթած եր այդ հրեշի վրա, և նա մի

կերպ յելնում եր փոսից ու առաջ գնում:  
Կտրուկ շրջադարձի տեղում, ուր թե մարդիկ  
և թե ձիերը լարում են իրենց բոլոր ուժերը,  
հարահր, ցով նրան առաջ են վազեցնում, հան-  
կարծ կողքի յե շուռ գալիս ու չնթուկում հեր-  
կի վրա, ճգմելով թե քեռի Յեգորին, թե քեռի  
Պախոմին, Միկիշկային ու Անդրուշկային...  
Այստեղ յերկար մնում է մարդակերհրեշը,  
սպառելով դատական քննիչն ու քննության:  
Ռասպոյասովցիների խուն ամբոխը միքանի  
որ անվերջ հարբեցողությամբ ե զբաղվում,  
մարդիկ փոխադարձ հայհոյանքներ են թա-  
փում: Այդ յերկարատես անդործության ժա-  
մանակ շատերի գլուխը ջարդվում ե, աչքերի  
մոտ սև բծեր են գոյանում, արյունը չորտ-  
նում ե քներակների վրա: Յեվ այդ այն ժա-  
մանակ, յերբ հրեշը նորից առաջ ե շարժվում,  
նորից ուժասպառ են լինում ճիերը, գործում  
են մտրակները և ողը ցցվում ե հարբածների  
աղաղակով:

Այդ հիսուն կոպեկանոց մարդը հրեշին  
մի կերպ քաշ տվեց, տեղ հասցրեց, — մինչեւ  
արագահոս գետակը, վորը անցնում եր այժմ  
համարյա գոյություն չունեցող անտափի մի-  
համարյա գոյություն չունեցող անտափի մի-  
համեծ ջանասիրությամբ սրբեղին անտառը,  
գարճներով սաժեններ, քառանկյունի շրջա-  
նակներ և այլն: Ծառերն ընկնում եյին ճքճը-  
քալով, բարձրածայն տարածվում եյին յեր-  
գերի, սղոցների ու կացինների ճայները:

Յերեկոյան, յերբ այդ բոլորը լոռամ եր, ողետունն սկսում եր թնդալ պարերից, հայհոյանքից ու տուրուղմփոցից: Ողետունը կառուցել եր իվան կուզմիչը, հենց նույն անտառի փայտերից:

— Մեր կուզմիչն ամա գլուխ ե հա՞ա, տղերք, — հարբած քրթմնջում եր ուսալուսովցին, — եղակս գլուխ չկա՛:

— Կարգին գործ ե տեսնում մարդը, խոսք չկա: Համ իրեն ե ոգուտ տալիս, համ մեզ նմաններին ոզնում:

— Աղքատին հաց ե տալիս, այ թե ինչ, — ավելացնում եր յերրորդը:

— Ե՛հ, խո չե՞նք մեռնելու... լցրու բաժակը:

— Հլա կտեսնես ինչե՞ր ե անելու: Ասում են, թե քարափիր պայթեցնել ե ուզում... լրցրու:

— Ե՛հ, տղերք, խմենք, քեֆ անենք... փո՞ղ ես ուզում, — հրես... թազա կտրած, բայց հին արժեքով յերկու մանեթ...

— Զեր վոտներին մեռնեմ, յես ել, պառավ հալովս կուզեմ մի պստիկ բաժակ արադ ճաշակել... յերիտասարդներիդ հետ... կուզմիչի փողերից մենք ել ունենք, տասնհինդ կոպեկ, կարելի յե հիսուն կոպեկ ել լինի, ել ինչ՝ պառավ ջանս չտաքացնեմ:

— Խմի՛ր, նանի, կուզմիչը շատ փող ու-

նի... գնանք քարափիր ջարդելու, ելի՛ փող կունենանք, լցրու:

Հիրավի՛, յերբ անտառն արդեն չքացել եր, իվան կուզմիչը հանդիպեց քարաչերափի, սկսեց փորել տալ, տեղափոխել քարն այնտեղից ու ծախել, մինչև վոր ամբողջ քարը դուրս քաշեց ու մինչև վոր գոյացած անձավոները փուլ յեկան ու մի քանի տասնյակ մարդ տակովն արին: Այդ ժամանակ պարզվեց, վոր այնտեղ չտեսնված քանակով յերկաթի կա: Իվան կուզմիչն անցավ յերկաթին: Քանդել եր տալիս, տեղափոխում ու ծախում: Փողը տանում եր բանկ և չեքերի գրքույկներ եք տանում:

Ահա թե մենք ինչ գիտենք այդ գրքույկների մասին, վոր նա համարյա ամեն տարի բերում եր քաղաքից: Արգյուք չա՞տ հարստություն կար նրանց մեջ: Թող այդ մասին ընթերցողը դատի:

## V

... իվան կուզմիչը քաղաքում ստացավ իր գրքույկներից վերջինը և յերեկոյան մեկնեց իր բնակավայրը, — Ռասպոյասովյոյի մրջանը: Պայծառ վառվում եյին այն գործարանի լուսամուտները, ուր ծխում ու սուլում եր հրեշշողեկաթսան: Աղմկում եր աղորեքը, աղմկում եյին «դինզն» ու ոսլայի գործարանը: Իվան կուզմիչն ամեն ինչ գնում եր, ա-

զում, մանրում ու ծախում։ Հազարավոր  
մարդիկ վխտում եյին գործարաններում։  
Այստեղ եյին քշել ուստոյասովյան ամբողջ  
շրջանը—մարդը մեկական ոռոբլի, հիսուն  
կոպեկ, քսանհինգ կոպեկ, և նույնիսկ ամենա-  
փոքր տղաներն ու աղջիկները այստեղ կարող  
եյին որական վաստակել տասը կոպեկ, քրքրե-  
լով ծվատները, վորոնք թարախոտ ու արյու-  
նոտ բերվում եյին հիվանդանոցներից և ու-  
ղարկվում թղթի գործարան։ Ամեն ինչ գործի  
յեր դրված ու գնահատված։

Իվան Կուզմիչն ապրում եր այդ ավանի  
կենտրոնում, փոքրիկ մի տան մեջ, չորս կող-  
մից զուտամուտներ, վորտեղից յերեսում եր  
այն ամենը, ինչ վոր կատարվում եր չուրջը։

Յերբ նա մտավ իր տնակը, սենյակում  
սաստիկ տաք եր և սեղանի վրա արդեն յեռում  
եր ինքնայեռ։ Նա ամուսնացած չեր, իսկ  
նրա սպասավորը ճարպիկ եր և գիտեր, թե  
ում հետ գործ ունի։

Իվան Կուզմիչը նստեց թեյ խմելու։ Թեյը  
խմում եր յերկար, ամբողջ յերեք ժամ, հարց-  
նելով, թե ինչ ե յեղել նրա բացակայության  
ժամանակ։ Պարզվեց, վոր ամեն ինչ բարե-  
հաջող ե...

Թեյից հետո Իվան Կուզմիչը պառկեց։  
Ամեն ինչ, կարծես, լավ եր, բայց ինչ-վոր  
մի բան պակասում եր։ Իվան կուզմիչը շարու-  
նակ զգում եր այդ պակասը։ Մի քանի անգամ

նրա մտքերը կանդ առան ամուսնության վրա։  
Բայց նա, լավ մտածելով, գտնում եր, վոր  
այդ ուղղակի հիմարություն ե։ Ահա, թե  
ինչու նա այժմ վորոշեց ձանձրույթից ազատ-  
վել այսպես, ինչպես միշտ անում եր։  
— Իվան, — ասաց նա ինչ-վոր լրջու-  
թյամբ։

Սպասավորը մոտեցավ։  
— Ի՞նչ կա «դինդում»։  
— «Դինդում» բանը վատ ե, իվան կուզ-  
միչ։

— Ինչպես թե վատ ե։  
— Բնդամենը յերկու կին կա, այն ել ուա-  
ռավ... Այ, աղոքիքում կա։

— Ո՞վ ե։  
— Անդրոնովնան, Մեծ Ազյորից։  
— Հ'մ, լավ։  
— Մարդը հետն ե...  
— Մի յերեքանոց գցիր նրան։

Սպասավորը ժպտալով դուրս յեկավ ու  
գնաց դեպի աղոքիքը։

Այս ամենը գեռ վաղուց չե, ինչ բոլորո-  
վին անհնարին եր։ Բայց յերբ մարդը գնա-  
հատվեց մեկ ոռոբլի, հիսուն կոպեկ, — թե  
ոռոբլին և թե հիսուն կոպեկը դարձան ամեն  
ինչ։

— Գնա, գնա, սիրելիս... Վոազիր։ Այ,  
եսպես մի բառ շալակիր, այն ժամանակ կը

մանաս, թե վորքան են քաղցր կարմիր թաշ-  
կինակները, արծաթ փողերը...

Այսպես եր ասում յերեխային գրկած  
ինչ-վոր կին, վորին անցնում եր իվան կուզմի-  
չի տան մոտից այն պահին, յերբ սպասավո-  
րի յետեկոց վազելով ներս եր մտնում մի այլ  
կին:

— Ո՛, հիմարի գլուխներ, — հոգոց հանե-  
լով ասում եր յերեխան գրկած կինը, — ինքը  
մենակ ուտելիք չունի, հզա դեռ մի ուտող ել  
պիտի շալակի... յերեկի նա չի, ուզում հայր  
դառնալ:

«Նա»բառը վերաբերում եր իվան կուզ-  
միչին: Յերեխան մոր ուսի վրայով անտարբեր  
նայում եր ինչ-վոր հեռու կետի:

Ի՞նչ և սպասում նրան:

Գործարանային կինը չի կարող իր ման-  
կանը խոստանալ այն վոսկե զարդարանքները,  
վոր ցնորքներով հրապուրված գեղջկուհին  
խոստանում եր իր մանկան: Նա գիտե, վոր իր  
մանկան գինը յերկար ժամանակ կլինի տասը  
կոպեկ, հետո քսան կոպեկ, և այսպես մինչեւ  
մեկ ոռութի, իսկ հետո նա, արդեն վոչինչ,  
վոչինչ չի արժենա: Նա գիտե, վոր իր գինն  
ել չնչին ե, վոր միայն կարող ե մի կերպ քաշ  
տալ իր գոյությունը... Ի՞նչ կարող ե ասել  
իր տղային: Ի՞նչ կդառնա նա, — մի մարդ,  
վորը իվան կուզմիչի գործերի համար հար-  
կավոր ե վորպես ուժ, վորպես վառելավիայտ,  
վորպես փալաս...

## ԳԼԵԲ ՈՒՍՊԵՆՍԿԻՆ ՅԵՎ ՆԱՐՈԴՆԻԿՆԵՐԸ

(ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ՀՈՂՎԱԾ)

Գլեբ Ուսպենսկին մենակ եր կանգնած իր սկեպտիցիզմով,  
հեգիական ժպիտով պատասխանելով ընդհանուր պատ-  
րամերն:

ԼԵՆԻՆ

I. 60-ԱԿԱՆ ՅԵՎ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԸ

1866 թվականին Պետերբուրգում հեղա-  
փոխական կարակողովն անհաջող մահափորձ  
կատարեց Աղեքսանդր II թագավորի դեմ:  
Թագավորի այն հարցին, թե «ինչո՞ւ դու ինձ  
վրա կրակեցիր»—կարակողովը պատասխա-  
նեց. — «վորովհետեւ դու գյուղացիներին ազա-  
տություն և հող խոստացար ու խարեցիր»:

Հիրավի, գյուղացիները չարաչար խար-  
վեցին ու նրանց սպասելիքները չարդաւա-  
ցան: Նրանք կարծում եյին, թե այն հողաբա-  
ժինները, վորոնցով ոգտվում եյին ճորտա-  
տիրական իրավունքի ժամանակ, պետք ե  
իրենց ձեռքին մնան նաև ճորտատիրական  
իրավունքը վերացնելուց հետո (1861թ),  
սակայն այդ բարենորոգումը նրանց ավելի

Քիչ հողաբաժիններ տվեց։ Այս խաբերայությամբ հրաշալի կերպով հայտնաբերվեց կոռուպտացիան կողմից բռնած և ըստ պատկանելույն չհասած մի թուղթիկում, -«Ճորտատերերի գյուղացիներին», -վորը կտղմը ված եր 1861 թվականին, Ն. Գ. Զերնիչսկու ձեռքով կամ նրա ազդեցությամբ։ Թուղթիկն այսպես եր պատկերացնում կարծեցյալ աղատությունը. -«Առանց կարգածատերերի սրիկայության, առանց սահմանաչափերի ներողամտության (դեպի կարգածատերերը), հողը սահմանաղծելիս հենց թագավորի հրամանով» առաջվան հողից կտրում են «մի տեղքառորդ մասը, մի տեղ յերրորդ մասը, մի այլ տեղ ել ամբողջ կեսը»։ Դյուղացին չի կարող ապրել կիսով չափ ստացած հողով, դիմում ե կարգածատիրոջը, թե «մի քիչ հող տուր», իսկ վերջինս «մուժիկից իր ուղած գինն ե պահանջում», մնում ե նորից «կոռ քաշել» կամ հողատուրք տալ։ «Յեվ մի՞թե միայն վարելահողի համար պետք ե ավելի մեծ տուրք վճարել», -ասում եր թուղթիկը... ԶԵ՞ վոր խոտհարքն ել համարյա ամբողջովին խլելու յեն գյուղացուց... Անտառն ել, ինչպես ասված ե համանւմ, կարգածատերերի բարիքն ե, իսկ դու, գյուղացի, յեթե աղային չվճարես, չհամարձակվես նույնիսկ խորիվ ել հավաքել... Աղան վարձ ե վերցնելու նաև ճում կամ գետակում ճուկ վորսալու հա-

մար»։ Այսպիսով գյուղացիների հողաբաժինը կտրելը, հողի ծանր վարձակալությունը (հողատուրքի նոր ձև), աղայի համար աշխատելու անխուսափելիությունը (կոռի նոր ձև), -ահա թե ինչ եր սպասում գյուղացիներին «աղատությունից» հետո։ «Ուղղակի ասած՝ կալվածատերերը թագավորի հրամանով բոլորին աղքատւթյան դուռը կդցեն» -ասված եր թուղթիկում։ Զարմանալի չե, վոր բարենորոշումից հետո, հենց առաջին յերկու տարում տեղի ունեցան հազարից ավելի գյուղացիական խոռովություններ, վոր նք յերբեմն զինվորական ուժով ելին ճնշվում, զնդակահարություններով վերջանում։

«Ճորտերի թակարդի» փոխարեն գյուղացիների համար նոր թակարդ ստեղծվեց։ Սակավահող գյուղացիները և աղայական տների հողաղուրկ սպասավորները վաստակ վիճուելու համար ստիպված ելին գնալ քաղաքները, վորտեղ նրանց մի մասը գործարանային բանվորներ եր գառնում, կամ մերով մի նոր գասակարդ - պրոլետարիատը։ Իսկ գյուղերում մնացած գյուղացիները կամ գաֆանորեն շահագործվում ելին հողատերեկալվածատերերի կողմից, կամ իրենց, վորպես բանվորական ուժ, ծախում այն մարդկանց, ովքեր ուղում ելին վորեւ գնով զնել նրանց։ Յեվ գնում եր կարգածատերը, զնում եր «կուլակը» - տեղական կամ յեկվոր, զնում

եր խոշոր ձերնարկատերը, առևտրականը կամ  
արդյունաբերողը:

«Ազատագրույունն» իրականում աչքի  
առաջ ուներ վոչ այնքան գյուղացիության,  
վորքան այլ դասակարգերի շահերը:

Յեվ շահեց խոշոր ու միջին կալվածա-  
տերը: Շահեց ձեռնարկուն, վաճառական-  
արդյունաբերողը (տես «Զեքերի գրքույլը»):  
Բուրժուազիան ավելանում ե իր քանակով.  
Նիկոլայան ժամանակներում նա գրեթե իրա-  
վագուրկ եր, իսկ «բարենորոգումների ժամա-  
նակաշրջանում» ձեռք բերեց մի շարք կարևոր  
քաղաքական իրավունքներ: Ազնվական-կալ-  
վածատիրական Ռուսաստանը վոր շ չափով  
դառնում ե բուրժուական:

Յուրահատուկ եր ինտելիգենցիայի դրու-  
թյունը: Քանակով նա աճում ե: Նրա մեջ  
մի առանձին խմբակ են կազմում «ռազնոչին-  
ցիները, վոր սակավ միջոցներ ունենալով,  
անկարող եյին վարձու աշխատանքով տնտեսու-  
թյունը վարել, քայլքայլում եյին: Իր գոյու-  
թյունը պահպանելու համար նա պետք ե ուրիշ  
աղբյուրներ վնտուեր, և յերիտասարդու-  
թյունը մայրաքաղաք ե գնում սովորելու հա-  
մար: Միևնույն շարժումն ե ստեղծվում նաև  
մանր բուրժուազիայի մեջ—դավառական  
հոգեվորականության, բանակային սոյայու-  
թյան, մանր չինովնիկության ընտանիքնե-  
րում, ուր մարդիկ առաջ նեղվում եյին, իսկ

հիմա յել «սնանկություն» եր նկատվում:  
Իտաղնոչին-ինտելիգենցիայի կադրերը լրաց-  
վում եյին նաև վաճառականության ու  
գյուղացիության միջավայրից յեկած մարդ-  
կանցով:

Այդ յերիտասարդությունը տվող ընտա-  
նիքների մեծամասնությունը, իր տնտեսական  
խախուտ դրության չնորհիվ (միշտ կարելի  
յեր մի կտոր հաղի կարող լինել), «կյանքի  
յերկյուղ» եր զգում: Նրանց հոգեբանու-  
թյունն այսպես բնորոշեց Գլեբ Ռուպենսկին,  
վորն ինքը մանր չինովնիկի ընտանիքից եր:  
Այդ ընտանիքը նյութապես ապահով եր այն  
ժամանակ, յերբ պահող ուներ, իսկ հետո  
զրկվեց ապրուստի միջոցներից: Նման անա-  
պահով ընտանիքներում, — ասում ե Ռուպեն-  
սկին, — ամեն ինչ յենթարկվում եր ինչ-վոր  
մի ծանր անխուսափելիության. «Կկորչե՞ս», —  
լսվում եր իմ բոլոր մոտիկների շրջանում:  
«Քանի հնարավոր ե, հարսնացու ճարիր, թե  
չե կորած ես»—և մարդը ճարում եր այլան-  
դակ մեկին ու անձնատուր լինում հարրեցո-  
ղության: «Պաշտոն գտի՞ր... առանց պաշտո-  
նի կորած ես»—ու գեղագետը, տաղանդավոր  
մարդը, դտնում եր տերտերի, փոստատարի  
«պաշտոն» ու նույնպես անձնատուր լինում  
հարբեցողության... Հորիզոնում չկար և վոչ  
մի պայծառ նշույլ» («իսկ Պարամոնը»):  
Ի՞նչ եր սպասում «ուազնոչին» յերիտասար-

դության, վորը միջնակարգ ու բարձրագույն կրթություն եր ստանում:

Կառավարությունը, վորը պաշտպանում եր ազնվական-կալվածատերերի և կապիտալիստների շահերը, բարեհաճ վերաբերմունք չուներ գեղի այդ յերիտասարդությունը: Առշոր արդյունաբերությունը դեռ այնքան զարգացած չեր, վոր աշխատանք տրամադրերէր մնած մեծ թվով աշդակիսի ուազնոչին-ինտելիգենտների: Սրանց անտեսական դրությունը մնում եր անկայուն ու անորոշ: Այն մարդիկ, վորոնք իրենց մեջ հաղթահարել եյին «կյանքի յերկյուղը», ստանձնելով չինովնիկի կամ ուսուցչի պաշտոն, ամուր կառում եյին այդ պաշտոնից, բացառապես անձնատուր լինելով անձնական բարեկեցության հրապերին: Ուստի էնսիկլին նրանց անվանեց «անվճարունակներ» (վոչինչ չեն տալիս նրանց, ում վղին նստել են), նրանց նմանացրեց այն «մեխին», վոր կողմնակի ձեռքն ամուր խփում ե վրոշ տեղի և վորը «ընդունակ ե պահել այն ամենը, ինչ վոր նրա վրա կախի այդ կողմնակի ձեռքը»: Ուազնոչին ինտելիգենցիայի մյուս, ավելի ուժեղ մասը չեր կարող դրանով բավարարվել: Նա հեղափոխականանում եր, տրամադրվում թե խոշոր կապիտալի դեմ, վորն իր գիշատչությամբ իրենից յետ մղեց ու վոչինչ չտվեց նրան, թե կառավարության դեմ, վորը խա-

միանում եր նրա կրթությունը և տրամադրիր չեր նրան իր մոտ աշխատանքի կանչել:

Այդ թշնամիների գեմ նա անկարող եր պայքարել իր ուժերով և պետք եր հենարան վնասուել կամ կալվածատերերի, կամ գյուղացիների մոտ: Կալվածատերերի—ֆեոդալական հասարակության այդ ներկայացուցիչների, «աղաների» հետ ուազնոչին-ինտելիգենտը չեր կարող և չեր ուզում մերձենալ. Նրա հայցքով այդ կալվածատերերը «ճորտատիրության աղբի վրա աճած սունկեր եյին» և «բացի այդ աղբի հետ փչանալուց, նրանց ուրիշ վոչինչ չի սպասում ապագայում» (Ուսպենսկի): Ռազնոչինն ուրիշ կերպ եր նայում գյուղացիության վրա: Տնտեսապես նա գյուղացիությանը մոտիկ եր զդում իրեն: Զե՞ վոր գյուղացիական տնտեսությունը չուկայի համար նույնպիսի մանր արտադրող եր, ինչպես և աղքատացող ազնվականի տնտեսությունը, ինչպես և մանր չինովնիկի ու ուազնոչինի աշխատանքը: Գլխավորն այն ե, վոր ուազնոչինն ընդունում եր գյուղացիության «ուժը». «գյուղացիները»—գատում եր նա, մոչ ավելի և մոչ պակաս 60 միւհոն են... թե գոռքերում, թե հոգեորականության ու քաղքենիության մեջ գերահում ե գյուղացիական նույն, թեև յատ թե քիչ նոր տարագ հագած տարրը» (Ուսպենսկի, «Փաքիկ տղերը»): Այս բոլորն ինքնակալության կողմից

տնտեսապես ու քաղաքականապես հայածված ռազմոչինին ստիպեց իր շահերը և հույսերը կապել գյուղացիության հետ։ Այստեղից ել առաջ յեկավ «գնալ ժողովրդի մեջ» նշանաբանը։ Այստեղից առաջ յեկան նարողնիկները։

Նարողնիկական շարժումն սկսվեց գյուղացիական ուժորմից հետո, 70-ական թվականներին ուժեղացավ և այդ թվականների վերջում կյանքի կոչեց «Հող և ազատություն» կուսակցությանը։ Շարժմանը մասնակցում եր սոցիալական ամենաբազմազան խավերի ինտելիգենտ յերիտասարժությունը։

«Ժողովուրդի մեջ գնալու» (70-ական թվականներին «Ժողովուրդ» ասելով հասկացվում եր գյուղացիությունը) նպատակները տարբեր երին։ Վոմանք, իբրև գյուղական ուսուցիչներ, բժիշկներ, բուժակներ, գավառակային գրադիրներ, հասարակ բանվորներ, ցանկանում երին ապրել «սեփական ձեռներով աշխատել», «լինել գյուղացիական կյանքի ընդհանուր պայմաններում» և «գոյություն ունենալ միայն այն միջոցներով, վոր նրանց աշխատանքի համար կտա ինքը, ժողովուրդը» (Ուսպենսկի)։ Նրանց նպատակն եր թեթեվացնել «Ժողովրդի» տառապանքները և ոգնել «Ժողովրդին», ազատվելու տղիտությունից ու աղքատությունից։ Մյուսները գնում երին «Ժողովրդին» ուսումնասիրելու, իմանալու նրա հասկացողությունները լավագույն սոցիալական կյանքի մասին։ Գնում երին նաև նրա

համար, վորպեսզի «Ժողովրդին» հասկանալ սային նրա դրության սոսկալիությունը, ըսրբութեյին նրա մեջ թափնված հեղափոխական կրակը, այդպիսով նրան մղեյին դեպի անհապաղ ապստամբություն։

Իրազնոչին-նարողնիկն իր ակնկալություններով գերազնահատում եր գյուղացիաւթյան հեղափոխական դերը։ Իրազնոչին-նարողնիկը կարծում եր, վոր Ոուսաստանը կարող ե և չդառնալ բուրժուակապիտայիստական յերկիր, վոր դրանից հնարավոր ե խուսափել գյուղացիական հեղափոխության միջոցով («Ժողովուրդը» պատկերացվում եր անդիտակցորեն-հեղափոխական)։ Նարողնիկները հույս ունեյին, վոր մեր գյուղացիությունը, տապալելով թագավորին ու կալվածատերերին, կարող ե, իր կյանքի համայնական կառուցվածքի չնորհիվ, վերակառուցվել կոմունիստական սկզբունքներով։ Նարողնիկության թեորիան ձևավորվեց իր դրությունից դժոն ինտելիգենտի գլխում, ինտելիգենտների, վորն իր հայացքները տանում եր ամենաբազմարդ դասակարգը Ոուդեպի ամենաբազմարդ դասակարգը Ոուսաստանում-գյուղացիությունը։ Այս թեորիան չեր համապատասխանում կյանքին։ Ստեղծեցով այն, նարողնիկը շատ բան հաշվի եր առնում։ Նա աչքաթող եր անում գյուղում սկսվող չերտափորումը։ «Կուլակն» ու «չքափորն» արդեն առկա եին։ Վերջինս այն քա՞ն եր ճռմված, այնքա՞ն ապչեցնում եր իր

աղքատությամբ, վոր պրոպագանդի համար նրա մոտ յեկած նարողնիկը սիրտ չեր անում նրա առաջ բերանը բանալ և հեղափոխական կոչ անել (նարողնիկ վերա Ֆիդների խոստովանությունը): Քաղաքական հեղափոխության հենարանը վորոշ չափով կարող եր լինել կուլակը, վորը կատաղորեն ուսում եր աղաներին, վորոնց հողի մեծ մասը, —մտածում եր նա, —չի ոգտագործվում, մինչդեռ հարկավոր ե գյուղացուն: Սակայն նարողնիկ-հեղափոխականը չեր կարող կուլակի հետ միևնույն ճանապարհով գնալ. ապարդյուն կլիներ սոցիալիզմ քարողել այն մարդուն, ով ագահաբար ձգտում եր ապրել ուրիշի հաշվին, ով, մեջտեղից վերացնելով աղաներին, ձգտում եր նրանց տեղը բռնել: Գյուղացու և նարողնիկի միասնությունը գլուխ չեկավ: Մերձեցման փորձերն անհաջողության ելին հանդիպում: «Քիթդ մի խոթի՛ր», —ահա, Ուստենսկու հայացքով, գյուղացին ինչպես եր վորոշում իր վերաբերմունքը դեպի նարողնիկ ները, վորոնք աշխատում ելին մերձենալ նրա հետ:

Նարողնիկների սիսալն այն եր, վոր նրանք հարկավոր ուշադրություն չգարձրին պրոյետարիատի վրա, չհասկացան նրա զեկավար դերը կյանքի վերակառուցման ասպարիզում, չնայելով, վոր 70-ական թվականներին արդեն դրսեռում եր բանվորների մարտական ինքնագործունեյությունը, —լինում ելին

շույցեր, գործադուլներ, բանվորական միություններ կազմակերպելու փորձեր: Իզուր չե, վոր 1870 թվականին Ալեքսանդր Զրդ թագավորը նահանգապետներին հրամանագրում եր Համենախիստ և անդադրում հսկողություն ունենալ գրծարանային բնակչության վրա»:

## II. ԳԵԼԲ ՈՒՍՊԵՆՍԿԻՆ ՎՈՐՊԵՍ ԳՐՈՂ ՅԵՎ ԳԵՂԱԳԵՏ

Այնպիսի մի յուրհատուկ հոսանք, ինչպիսին նարողնիկությունն եր, չնր կարող չըստեղծել իր գրականությունը: Ուաղնոչին-նարողնիկներին չեր կարող բավարարել ազնվական գրականությունը, վորն արտացոլում եր գրող-կալվածատերերի իդեոլոգիան և հոգեբանությունը, թեկուզ և այդ գրականությունն աչքի յեր ընկնում գեղարվեստական բարձր արժանիքներով: Նարողնիկական ըեւլետրիստիկան, հրաժարվելով այնպիսի բարդ ձևերից, ինչպիսին ելին վեպն ու դրաման, տալիս եր միայն ոչերկներ, տեսարաններ, պատմվածքներ, վոչ-բարդ վիպակներ: Այդ բելետրիստիկայի ընորոշ առանձնահատկությունները մենք տեսնում ենք Գլեբ Իվանովիչ Ռևոլյունսկու յերկերում:

Ուսպենսկու ստեղծագործության մեջ հասարակական շահերը գերակշուռակ են գրական շահերին: Կարծես թե, խուսափելով «աղայական պչրանքներից» և «ձեռնածություններից», Ուսպենսկին հարկավոր չափով հոգ չեր

տանում գեղարվեստական ձևի մասին։ Որինակ, նա կենդանի պատկերներ տալու փոխարեն յերկար դատողություններ ե անում իրեն հուզող կենսական հարցերի շուրջը։ Հաճախ հրապարակախոսը վտարում է գեղագետին։

Ուսպենսկու ստեղծագործության խոչոք արժանիքն այն ե, վոր նա ձգտում է ճշմարտապես պատկերել կյանքը։ Նա նպատակադրվում է անքթիթ դիտավորությամբ ուսումնասիրել մարդկանց կյանքը, այդ նպատակով մոտիկից շիվելով նրանց հետ։ Ուսուդյուզու կյանքն ուսումնասիրելու համար նա յերկար ժամանակ ապրում է նովզորոդի և Սամարայի նահանգներում, ճանապարհորդում է դեպի Ռուսաստանի զանազան վայրերը։ Այսպես նյութեր ե հավաքում իր գեղարվեստական յերկերի համար, այսպես ուսումնասիրում բնակչության այն խավերի լեզուն, վորոնց պատեհում ե նա։ Նրա յերկերը միանդամայն ուղարկատական են։

Ուսպենսկու ռեալիզմում կա յուրահատուկ մի գիծ։ Կորոլենկոն\* Ուսպենսկուն անվանում է «դրսեվորված ջղերով մարդ», բնորոշելով. թե նա ինչպես ե ըմբռնում կյանքի յերեւոյթները և ինչպես խորն ու սրտագին արձագանքում այդ յերեւոյթներին։ Ուսպենսկին, — ասում է Կորոլենկոն, — ցավ եր զգում այն-

\* Կորոլենկո, «Գլ. Ուսպենսկի» (ակնարկ «օտօպել անձ» ժողովածույթ)։

տեղ, ուր մենք, ավելի կոպիտ ջղեր ունեցողներս, անտարբեր ենք մնում։ Ուսպենսկին այդ ցավը համարում եր մարդկային նորմալ զգացմունք, ձգտում եր նրանով վարակել ընթերցողին։ Այդ նպատակով նա յերեմն ընթերցողին ստիպում եր յերկար ծիծաղել, վորպեսզի հետո միանդամից նրա ծիծաղը կտրի ու տանի դեպի շփոթ, դեպի մարդու համար ցավելու զգացմունքը (տես նրա «Անբուժելին» պատմվածքը (ոռուսերեն)։

Մարդու համար ցավելու զգացմունքը Ուսպենսկու ստեղծագործության մեջ այնքան ուժեղ եր արտահայտվում, վոր յերկիծաբանական հարուստ ծիրքը, թույլ տալով Ուսպենսկուն դասելու ֆոնվիդինի, Գոգովի, Սալտիկովի, Զեխովի շարքը, չեր կարող չհանդիպել անջրպետների։

Մենք ուրախ ու անհոգ ծիծաղել կարող ենք միայն այն ժամանակ, յերբ մեր ուշագրւթյունը չենք կենտրոնացնում տվյալ յերեմույթի հետ չաղկապված տանջանքի վրա։ Սակայն բավական ե ծիծաղելի յերեւոյթի տակ տեսնել տառապանքը, —և ծիծաղը կամ միանում ե որտոմության (հումորիստներ Գոգոյն ու Զեխովը), կամ բարկության, ցանումին (յերկիծաբան Սալտիկով)։

Ուսպենսկու ստեղծագործության մեջ, նույնիսկ նրա առաջին յերկու գրվածքներում, մենք չենք տեսնում անհոգ և ուրախ ծիծաղ,

ինչպես և չենք տեսնում Սալտիկովի խարազանող ծիծաղը։ Ուսպենսկու հումորը սովորաբ շայկալվում է կյանքին վերաբերող տիուր կամ ցավադին մտքերի հետ։ Տարիներ հետո ուժեղանում է գյուղի ուշադրությունը դեպի տառապանքը, սրվում է նրա ցավը, և ծիծաղն ել տեղ չի ունենում, հանգչում է։

Իր սկզբնական յերկերում գրողը տալիս եր հերոսի պորտրեն, նկարագրում եր նրա արտաքինը, — քայլվածքը, տարազը, դիմագըծերը, և այսպես մոտենում եր բանվորությունը պատկերացնելուն։ Հետագայում Ուսպենսկու ստեղծագործությունների մեջ դեմքերի այդպիսի նկարագրության արդեն չկա։ Տվյալ անձնավորության բնավորությունը ճանաչվում է նրա խոսքերում և արարքներում յեղած տիպիկ դասակարգային գծերով։ Հեղինակը չի տալիս իվան Բոսիխի, Մյասնիկովի, հին վաճառականի մանրամասն դիմանըկարը։ Մյասնիկովի պատմածում ու խոսքերում մատնանշվում են դիշատիչ արդյունաբերողի միայն ընդհանուր գծերը՝ ինքնարավականություն, համարձակություն, ինքնավտահություն։

Բնութագծման յեղանակից մեկը հանդիսանում են գործող անձերի ազգանուները և գործողության մայրերի մտացածին անունները, որինակ, Մյասնիկով, Պրետերպեներ, Ռաստերյանա փողոց, Ռասպոյասովո-

գյուղ\*։ Ուսպենսկին գրեթե ուշադրությունը չի դարձնում պեղաժի վրա, կարծես, չցանկանալով ընթերցողի ուշադրությունը հեռացնել հիմնական բովանդակությունից։ Բնությունը նա հիշում է մեկ յերկու տողով, որինակ, «Չմեռնային ցուրտ որ պապղում է ձյունը. սառած լուսամուտից յես հաղիկ տեսնում եմ, թե ինչպես գյուղացի իվան Բոսիխը մըտնում է ընդարձակ բակը», —և ուրիշ վոչինչ։ Որենբուրգից մինչև Ուֆա ճանապարհին մեր հեղինակին գերող տեսարանների նկարագրությունը (տես « Ազգական առաջնախաղը » 1880թ.) ընդհատվում է հետեւյալ խոսքերով։ — «սակայն բավական ե անձնատրվել ցնորդներին, վոր ստեղծում են բնության հրաշագեղ պատկերները»։ Ուսպենսկու համար պեյզաժը համարյա միշտ լինում է շատ թուցիկ, պատահական և զուրկ ե ինքնուրույն նշանակու-

\* ) Ուսպենսկին այդ անուններով բնորոշում է գործող անձերին կամ գործողության վայրը. «Մյասնիկով» (ռուս. МЯСНИК-բառից-մսավաճառ բառն արտահայտում է այդ հերոսի գիշակեր բնությը, Պրետերպեներ աղգանունը վերցրել ե ռուսերեն քրետերությունում, Պրետերպեն աղգանունը է համբերել, տառապանք կրել և այլն։ Այս իմաստով «Ռաստերյանա փողոց»—«շփոթվածության փողոց, Ռասպոյասովով» գյուղ—«գյունիսերը հանածների» գյուղ։ Եռույն գիտավորությամբ հեղինակը գործ է ածել «Պրիսուլինո» («չորացած-կապած»), «Զասուլինո» («յերաշտական, չորացած») և «Ռալենլինո» («ապտակ կերած») բառերը.

թյունից (որինակ, անտառը «Զեքերի գրքույշ-կոմ»):

Գրողը հաճախ գործադրում ե հակադրության (կոնտրաստի) ձևը: Ուսպենսկին ոգովում ե այդ ձևից, վորպեսզի ընդդժի դասակարգային հակասությունները կամ ուրվագծի միևնույն սոցիալական խմբակի կյանքում կատարված խիստ փոփոխությունները (աղայի «մելամաղձոտությունն» ու մուժիկի «մելամաղձոտությունը» ճորտատիրության ժամանակաշրջանում, աղվեսային արտաքին ունեցող հին վաճառականը, վորը ճանապարհ գընալուց առաջ մաղթանք ե կատարում, և նոր վաճառականն իր համարձակ կերպարանքով. վերջինս, ճանապարհ գնալիս, գրպանն ե գընում վեցփողանի ատրճանակը):

Ուսպենսկին առանձնապես չի հոգում լեզվի պատկերավորության մասին, եպիտետները, պատկերները, վոր սովորաբար գեղազարդում են արվեստագետի լեզուն, չեն գրավում Ուսպենսկուն, հաճախ չեն պատահում նրա յերկերում. ծայրահեղության չափ հազվադեպ են նաև սիմվոլիկ պատկերները: Նուրբ համեմատություններ գրեթե չկան: Գործող անձինք համեմատությունները միշտ վերցնում են իրենց մոտիկ միջավայրից. «Խոկական արջ ե, կուլել ե գայլերի հետ», «արջի նման սկսեց պտտվել տան շուրջը», «դառնությունից սկսեց ծվծվալ, ինչպես թշվառ նա-

պաստակ», «մենք բոլորս պիտի սառչեյինք նի նմաների նման»:

Ուսպենսկու յերկերի հերոսները միշտ խոսում են տվյալ սոցիալական խմբին հատուկ լեզվով, վորն անպայման ճիշտ ե իր կառուցվածքով և բառերի շարահյուսությամբ: Հերոսների խոսելու ձևը միշտ ցայտուն կերպով արտահայտում ե տվյալ անձի տրամադրությունը, բնավորությունը: Իրեն, Ուսպենսկու բառապաշարում պատահում են խիստ արտահայտիչ, հեղինակի չափ կամ նրան պատկանող բառեր ու դարձվածքներ. «խոզավարի մարդ», «խոզավարի տարր» (կյանքի գոեհիկ կողմը), «վզին նստել» (շահագործել), «միտքը լուսավորեց», «հալչող հոգի» (անդիտակցական, գրեթե անառնական գոյությունից գիտակցական մարդկային կյանքին անցնելը), «անվճարունակներ» և այլն:

Յեթե Ուսպենսկին, ինչպես ասացինք, քիչ եր հոգում գեղարվեստական ձևի մասին, ապա այստեղից չի կարելի յեղբակացնել, թե նա չեր գնահատում այն, չեր գնահատում գեղարվեստական յերկը: Մենք գիտենք, վոր կարդալով կորունկոյի մի «սքանչելի» պատմվածքը, —ինչպես ինքն ե վորակել, Ուսպենսկու սկսեց յերազել, վոր ինքն ել, «յերբ ուշքի կին սկսեց յերազել, վոր ինքն ել, «յերբ ուշքի կգա», կտա «զուտ բելետրիստական պատմվածքը, առանց դատողությունների»: Նրա ստեղծագործության մեջ այդպիսի պատմ-

վածքներ կան: Այդպիսի գեղարվեստական յերկերից մեկն են բարակ և բարձր պատճենները» ոչերկը:

Իսկ թե Ուսպենսկին գեղարվեստական խնչպիսի լեզվով կարող եր խոպէլ, յերբ անձնատրվում եր գեղարվեստական ընդլայնումներին, այդ մասին կարելի յե դատել թեկուղ նրա նկարագրած անտառի հրդեհից («սեփական միջոցներ»-ը, և «աստված համբերում ե մեղքերը» ոչերկներում):

«Անտառները այրվում են հանդարտ, լուռ, ասես, մտազրաղ. խաղաղ յերեկոներին վորեւե ծառ վառվում ե մոմի նման. ճքճքում ու կծկվում ե կնճնին, կանաչ տերեները բռնկվում են ու ծալվում. մերթ ընդ մերթ ճքում ե, փայլակի նման, մթին անտառի վրա բոցավառվում ե կրակից շիկացած սոճու խիժաբույր գազը... Յեկ կրակը, կարծես, ինչ-վոր պարտականություն կատարելով, անշտապ, ավերելով մոտ հարյուր դեսյատին պետական կամ կալվածատիրական և կամ գյուղացիական անտառը, հասնելով մինչեւ դաշտ, ուր այլևս նրա համար կերակուր չկա, սկսում ե ծամել շոգից ու տապից չորացած խոտը, ծամում ե վորպես հետ ու հեղաբարո վոչխար, ծամում ե մեկ որ, յերկու որ, քայլ առ քայլ անցնելով առուները, անցնելով ճահճուտների կողքից ու չոր տեղեր փնտուելով: Համսում ե մինչեւ նոր ու թարմ անտառը,

մինչեւ նոր կեչին, այս ու այն կողմ արձակելով նույնպիսի հեղաբարո, հրեղեն, փոքրիկ վոչխարներ... կրակը մագլցում ե կեչու վրա, քչփորում շամբուկի կամ լաստենու թփի ներսը, ու մեկ ել տեսար մի որ, յերկու որ հետո ածխանում, մոխրանում ե ելի հարյուր դեսյատին անտառո»: Նույն նկարագրության մեջ գիշերն այրվող անտառները համեմատվում են «պարահանդեսի դահլիճի» կամ «հրավառված հսկայական պարկի» հետ:— «Վմենուրեք—կրակներ, աստղեր, բենդուլյան կրակներ (սոճին բռնկվել ե), իսկ նրանց միջև—այրված, կամ գեռ վառվող թիեր, ինչպես խումբ-խումբ հյուրեր, վորոնք պարում են, խոնվում թղթախաղի ուստելեղենի սեղանների շուրջը»... «Յերեկը,—այսպես ե վերջացնում Ուսպենսկին նկարագրությունը, —իհարկե այդ բույրը չքանում ե ու մնում միայն հեղցուցիչ ծուխն ու խանձահոտը»: Վերջին յերկու բառերը, —«ծուխն ու խանձահոտը», —վոչ միայն ավարտում են անտառի հրդեհի պատեերը, այս վորպես սխմբուլը ընթերցողի կողմից հեշտությամբ վերադրվում են մարդկային այն խմբի կյանքին, վորը վերդրած ե համեմատության համար:

Ուսպենսկին իր գեղարվեստական տաղանդում անշուտ աչքի ոնկնու տեղ ե բռնում վոչ միայն բելետրիստ-նարուդնիկների, այլև մեր կլասիկ գրողների շարքում:

Գլեք Ուսենսկին իր ժամանակակիցներին հուզում եր, վոչ միայն վորպես խոշոր գրող-գեղագետ, վորը ձեռնամուխ եր յեղել գյուղացիության պատկերման, այլև վորպես բելետրիստ—հրապարակախոս, վորը հանդես եր գալիս այն ժամանակվա կյանքի առաջադրած հարցերին իր պատասխաններով։

Նրա գրական գործունեյությունը տևեց 30 տարի, —1862-ից մինչև 1892 թվականը։ Կենացաղագրական ստեղծագործությունից հետո, — յերբ նա պատկերում եր քաղաքի ծայրամասերի մանր քաղքենիների կյանքը և չեր փորձում իր նկարագրածը բացատրել վորեւ թերթիայով, — նա 70-ական թվականների կեսերից, իր արտասահմանյան ճանապարհորդությունից հետո (1871 և 1874-1876 թ.թ.), ինչպես ինքն է ասում, «ուշքի յեկավ», «սկրուց գիտակցաբար գրել», հանդիսանալով վո՞չ միայն իրեն գեղարվեստագետ—պատկերող, այլև տեսաբան, հրապարակախոս, վորն գրադիմած եր «Հողի իշխանության» և «կապիտալի իշխանության» հարցերով։

«կապիտալի իշխանությունն» առաջին մեծ հարցն եր, վոր գրադեցնում եր Ուսպենսկի—հրապարակախոսին։

Այն տարիներին, յերբ նա գտնվում եր արտասահմանում, արևմտայելքոպական կյանքը նրան թվում եր «դաժան» և «սոսկա-

լի»։ Նրա համար հատկապես սարսափելի յեր այն, վոր կյանքի «դաժանությունն» ամենուրեք ճանաչվում ե նորմալ, չի դատափետակում։ «Ամեն մեկն ամուր պահում ե այն, ինչ վոր գովել ե իր ուժեղ ձեռքով», «մի վերջոկ յերջանկությունը ձեռք ե բերվում հազարավոր մերձավորների մահով», — ահա լոնդոնից ստացած նրա տպավորությունները։ Թե ինչպես ե պահպանվում այդ հասարակակարգը, այդ մասին խոսում ե կոմունարների դաժան կոտորածը, կոմունարների, վորոնք հանդըդնեցին «շառաչուն ապտակ» տալ բուրժուական Փարիզին։ Ուսպենսկին «խելագարի կամ քարացածի պես» կանգնեց այն հրապարակում, ուր մի տարի առաջ 450 կոմունար գնդակահարվեց, ուր «ինչքան ել մաքրում եյին, այնուամենայնիվ արյան կաթիլների հետքերը» մնում եյին։ Նա ականատես եր կոմունարների դատին։ — «մի ժամում մեր ներկայությամբ յերեք հոգու մահվան դատապարտեցին», «ավելի զայրացուցիչ բան յես չեյի տեսել» (Փարիզից գրած նամակը)։ Ցանկանալով իրեն պարզ հաշիվ տալ, թե ինչից առաջացավ սերբերի ու թուրքերի պատերազմը, վորը մեր նույնիսկ առաջավոր մամուլը պատկերացնում եր իրեւ «ոլավոններին թուրքական գաղանություններից» ազատագրելու պատերազմ, — Ուսպենսկին 1876 թվականին գնում ե Մելրիա և ապա պատերազմի պատ-

ճառը համարում սերբ կապիտալիստների  
ձգութանքները՝ մեծ շահույթներ ստանալ:

Ահա արևմտյան կապիտալիստական հա-  
սարակարգից ստացված այդ բոլոր տպավո-  
րությունների հանրագումարները. «Պետք ե  
վոր մարդկությունը պաշտպանի ինքն իրեն,  
սանձահարի այդ քաղաքակրթությունը,  
ստիպելով նրան, վոր իրեն վայելուչ պահի  
և առհասարակ խելքի գա»: Կապիտալիստ-  
ներին ծառայելն Ուսպենսկին խայտառակու-  
թյուն եր համարում. «Ստոր կոնցեսսիոներ-  
ները միջիոններ են կուլ տալիս հանուն այլ-  
և այլ սրիկայական պրոյեկտների, —իսկ քա-  
նի՛ անդամ ավելի սոոր և այն ինտելիգենցի-  
ան, վորը վոչ թե միջոններ, այլ կոպեկներ  
ստանալու համար յերկրի խորքերում իրա-  
գործում և այդ պրոյեկտները: Կոնցեսսիո-  
ներների հսկայական ծնոտները վոչինչ չպիտի  
կարողանային անել, յեթե նրանդ չոգնելին  
այդ կոպեկանոց ատամներո... Յես չեմ կա-  
րող ինել այդ ատամների թվում»\*):

Բնական եր, վոր Ուսպենսկին սարսափում  
եր այն մտքից, թե կապիտալիստական հա-  
սարակարգը կարող է հաստատվել Ռուսաստա-  
նում:

\*) Միխայլովսկուն դրած իր նամակում Ուսպենսկին  
այդպես բացատրեց, թե ինչու յեր հրաժարվել յերկա-  
թուղային վարչություններից մեկում (կալուգայում)՝  
ծառայելուց:

Դեռ գտնվելով արտասահմանում, իմաս-  
տավորելով իր հայրենիքում տեսածը, Ուս-  
պենսկին ստեղծագործում ե այնպիսի պատմ-  
վածքներ, վորոնք պատկերում են կապիտա-  
լի ներխուժումը զեպի նահապետական կյան-  
քը: Այդպես ե նրա «Կծու նորույթներ»  
ակնարկը (1875թ.), այդպես ե նրա «Զեքերի  
գրքույկը», վորը գրված է 1875 թվականին և  
վորը գրաքննության կողմից արգելված՝  
«Աշխուժացրած վայր»-ի վերամշակումն ե:

«Կծու նորույթներում» մերձվոլգյան  
մի գետակի վրա գտնվող Պոկրովսկոյե կոչված  
աղքատ գյուղն ե գալիս առաջին շոգենավը,  
այնուհետեւ այդ գյուղի միջով անցնում ե  
յերկաթուղին և նա կենդանանում ե. գալիս  
ե փողը, պոկրովցիները հնարավորություն  
են ստանում «մտածել իրենց մասին», աշխա-  
տել իրենց համար: Նրանց մոտ գալիս են  
կուզտուրական մարդկե, —ճիշտ ե, վոչ ուժեղ.  
գալիս են գավառական քաղաքից, և «առկայ-  
ծում ե մտքի աստղը»: Այդ խնդառու յերե-  
ռութիւնի հետ լինում ե մի տխուր յերեռույթ, —  
ամեն ինչ ծախու յե դառնում:

«Զեքերի գրքույկը» կապիտալի յերթն  
արդեն դիտվում է միայն բացասական կող-  
մից: Գիշատիչ գործունեյության են անցնում  
այնպիսի ձեռնարկու մարդիկ, ինչպես Մյաս-  
նիկովը, վորն առետրականից դարձել և ար-  
դյունարերող: Ոժաված լինելով փողի ուժով,

նրանք, վորպես առասպելական հսկաներ, «ուղղակի լեռներ են շարժում», «վոչչացներով բնության և մարդու յերկարամյա աշխատանքը»: Ռուսական ինքնակալության ուրենքներում չկա նրանց գիշատչության և վոչմի արգելք: Ընդհակառակը, այդ որենքները պաշտպանում են նրանց սեփականատիրական շահերը: Մյասնիկովներին ոգնում են նաև գյուղացիության քայլայումը, վորը կապված էր 1861 թվականի բարենորոգումների հետ: Գիշատիչ-ձեռնարկուի համար աշխատում են՝ թե՛ հասակավոր տղամարդիկ, թե՛ կանայք և թե՛ յերեխաները, աշխատում են ամենասոսկալի պայմաններում, և չկա վոչմի հույս լավագույն գալիքի համար: «Գործարանի կինը գիտե, վոր իր մանկան գինը յերկար ժամանակ կլինի տասը կոպեկ, հետո քսան կոպեկ, և այսպես մինչեւ մեկ ոուրիշ, խոկ հետո նա արդեն վոչինչ, վոչինչ չի արժենա»: Մյասնիկովը չի հոգում իր բանվորների մարդկային գոյության մասին: «Մարդիկ նրան հարկավոր են վորպես ուժ, վորպես վառելափայտ, վորպես փալաա»:

Յելք վնատելով իր ժամանակակից սարսափներից, Ուսպենսկին դիմում ե զ. ւղացիության: Արդյոք նրանում չե՞ն թագնված կյանքի բարեւավման ստեղծագործ ուժերը:

Սկզբում Ուսպենսկին բացասական պատասխան ե տալիս այդ հարցին: Մեկ ու կես

տարի (1878-1879) ապրելով Սամարայի «հարուստ, բայց աղմկալի», կիսով չափ հարբեցողությամբ տարված ու փչացած» գյուղում, վորտեղ իշխում ելին կուլակները, Ուսպենսկին հանգեց հետեւյալ յեղբակացություն: Համայնական կենսակառուցվածքի մասին խոսք չի կարող լինել. «Կուլակությունը վոչթե գրսից յեկած, այլ ներքին յերեսույթ ե», «վոչ թե այնպիսի մի բիծ ե, վորը կարելի յենջել, այլ մի ախտ, որդանական հիվանդություն», դրան անձնատրվում են ուժեղ մարդիկ, իսկ գյուղի կյանքը դրան չի կարող հակադրել վորեւ հավասարագոր մի յերեսույթ: «Շարքային գյուղացու գործունյա միտքը, ասում եր Ուսպենսկին, —աշխատում ե մի կոպեկ ձեռք բերելու համար, ամելի տաղանդավորները ձգտում են չաղ գումարներ գըռփել», կոպիտ, զուտ անձնական շահերից դենը չեն գնում: 1878—1880 թ.թ. Ուսպենսկուածած այդ ճշմարտությունը («գյուղական որագրից») նարողնիկական շրջաններում փոթորկալի ցասում առաջ բերեց. բանը հասավ այնտեղ, վոր նրան կշտամբում ելին «դավաճանության», «ժողովուրդին» (այսինքն գյուղացիության) թշնամի լինելու համար:

Ուսպենսկին ինքն ել չեր կարող հաշտվել իր արած յեղբակացությունների՝ լուղհանքումների հետ և շարունակում եր ոու գյուղացիությանն ուսումնասիրելու լարված,

զուտ հետապնտական աշխատանքը։ 1879 թվականի վերջում և 80-ական թվականների սկզբին նա ապրում եր Նովգորոդի նահանգի մի խուլ վայրում և գարնան ու ամառը յերկարատե ճանապարհորդություններ կատարում Ռուսաստանում։ Նովգորոդից նա այլ տպավորություններ եր ստացել, քան Սամարայի գյուղից։ Այնուեղ նա դիտում եր, թե ինչպես անտառի խորքերում վայրի մի տեղ կենդանություն ե ստանում հողագործի արորից, վորը պատկանում եր յերկրագործական աշխատանքով զբաղված մի միջակ ընտանիքի։ Այդ ժամանակվա դիտողություններն ու խոկումները վորոշ արտահայտություն են գտնում «Գյուղացին և գյուղացիական աշխատանքը» խորագրով ակնարկներում, վորոնց առաջին գլուխը, —«Խվան Յերմոլաևիչը» տպվել եր 1880 թվականի՝ հոկտեմբեր ամսին։

Այն, ինչ վոր տվեց Ռւսպենսկին հիշյալ ակնարկներում, նարոդնիկներին հաշտեցրեց նրա հետ, այդ ժամանակ նա պատվավոր տեղ ե գրավում նարովնիկների մեջ, թեալետ այստեղ ել իր ճանապարհով ե գնում։

Գյուղացիության կենսակառուցվածքը և նրա աշխարհայացքը ճգլտաբար հիմնելով յերկրագործական աշխատանքի պայմանների վրա (և վոչ թե գյուղացիության զգացմունքների, հասկացողությունների վրա, ինչպես

անում ելին նարոդնիկները), Ռւսպենսկին թույլ ե տվել նաև կոպիտ սխալներ։ Նա հաշվի չեր առնում, վոր յերկրագործի այն հաստատուն, քարացած կենսակառուցվածքը, վորի մեջ նա փրկություն եր տեսնում և կոչ անում դեպի այն, եյապես բարբարոսական կենսակառուցվածք ե։ Գյուղացու կյանքը դիտելով պատմությունից դուրս, աշխատանքի պայմանների փոփոխումից, դասակարգացին պայքարից դուրս, Ռւսպենսկին հաշվի չառավ և այն, վոր մարդը, սկզբում գտնվելով բնության իշխանության տակ, հետո ինքն ե սկսում նրա վրա իշխել և հենց այստեղից ել փոխվում են նրա կենցաղն ու աշխարհայացքը\*）։

Ինչպես յերեվում ե մեր ասածներից, 80-ական թվականների առաջին կեսին Ռւսպենսկին իր գաղափարախոսությամբ մոտենում ե նարոդնիկներին։ Նա, ինչպես և նարոդնիկները, կապիտալիզմի միայն բացատական կողմերն ե տեսնում, հավատում ե, վոր Ռու-

\* ) Դրա որինակն Ռւսպենսկին ինքն եր տալիս իր «Գյուղացին և գյուղացիական աշխատանքը» ակնարկներում։ «Գութանը գյուղ հասավ թե չե, —ասում ե նա, —գյուղացիական վողու հիմքերը, յեթե չփլչեն, ապա զգալի չափով կցնցվեն... քանի վոր զութանը թե անձրեկ և թե ցեխի ժամանակ քանդում ե հողը, ուրեմն մեղրամոմի քանակը (յեկեղեցում) պետք ե պակասի... տերտերը (քահանան) կսկսի խոսել ուսրերի ապականման մասին»։

սաստանը պիտի գարդանա Արևմտյան Յեղուալից տարբեր ուղիով, վոր հնարավոր ե Ռուսաստանի կյանքը վերակառուցել մեր «Հղոր ու հեղաբարո» գյուղացիության ուժերով։ Սակայն այդ ժամանակ ել Ռւսակենսկին հեռու յե գյուղացիության այն իդեալականացումից, վորը հատուկ եր նարողնիկներին. Ռւսակենսկու կարծիքով՝ գյուղացիությունը «Հղոր ու հեղաբարո» կլինի միայն այն ժամանակ, յերբ կենթարկվի հողի իշխանության, իսկ իր ժամանակակից գյուղում նա տեսնում ե վոչ միայն հողի, այլև կապիտալի իշխանությունը։

Կինելով ճշմարտության խիստ վորոնող, Ռւսակենսկին չբավականացավ «հողի իշխանության» իր «նարողնիկական թեորիայով» և շուտով ինքն իր առաջ հարց դրեց Ռուսաստանի համար անխուսափելի՝ կապիտալի իշխանության մասին։

1886 թվականին Հարավային Ռուսաստանում ճանապարհորդելիս, նա տեսավ ուռագյուղացիության անող դրությունը, գյուղացիության, վորը տառապելով կարիքի մեջ, ամառը միլիոններով ամբոխներ և տալիս աշխատանք մնառելու համար, առաջարկը գրեթե յերկու անդամ ավելի յե պահանջից (տես «Բերքը»)։

1887 թվականի վերջում Ռւսակենսկին, ինչպես յերկում ե նրա նամակներից, վառ

ցանկություն ե զգում մի շարք ակնարկներ գրել «կապիտալի իշխանության մասին»։ «Յես կվերցնեմ կյանքի այն յերեսութները, — ասում ե նա, — վորոնք կախված չեն կառավարության վորեւ քմահաճույքից, այլ անխւսափելի յեն ու սարսափելի»։ Նրանց «սարսափելիությունը» նա վճռում է հասկանալի դարձնել ընթերցողին, վիճակադրական կոտրակները տալով «այլանդակված ու հաշմած մարդկանց կերպրանքով»։ Այս մըսադրության կատարումը սահմանափակվեց միայն «Կենդանի թվեր» արժեքավոր ակնարկներով, վորտեղ դրսեռորված է «մի քառորդ ձի» վիճակադրական կոտրակը՝ ձի չունեցող գյուղացիների աշխատանքի պատկեր և։ Հեղինակն իր ակնարկների լրիվ խորագիրն այսպես եր ձեւակերպում։ «Կապիտալ։ Ակնարկներ ժամանակակից կյանքից։ Կենդանացող յերկաթն ու մեռնող մարդը»։ Հեղինակն այս վերնագրով ուզում ե ասել, վոր կապիտալի մուտք գործելուց յերկաթը կենդանանում ե, իսկ մարդը, վոր կյանքում կարդ լր «ինքը լինել իր ծառան և տերը», մտածող արարածից վերածվում ե բանվորական ձեռների։

Ռւսակենսկին, նարողնիկների նման, իր ուշադրությունը կենտրոնացնում է կապիտալագության հասարակարգի միմիայն մութիւնում երի վրա և չի տեսնում կապիտալիզմի կողմերի վրա և չի տեսնում կապիտալիզմի անդիսի կողմերը, ինչպես՝ հաջողությունապիտիսի կողմերը, ինչպես՝ հաջողությունները տեխնիկայի բնագավառում, բանվոր

դասակարգի աճը։ Ուսպենսկու և նարովնիկ-ների հայացքների այդ նմանությամբ հանդերձ՝ 80-ական թվականների վերջում նկատվում է նաև այդ հայացքների խիստ տարբերությունը։ Մենք տեսնում ենք, թե ինչպես նա տիսուր ու հեղնաբար ժպտում է այն «ընդհանուր ցնորդների» վրա, վորոնց նա յենթարկվել եր վորոշ չափով։ Նա ստիպված է լինում ճանաչել «կտրոնի (կապիտալի) տիրապետության» անխուսափելիությունը։ «Ռուսաստանը, —ասում է նա, —չի կարող խուսափել կապիտալիզմից» («թեկուղ և պետք ե»)։ Մինչեռ նարոդնիկները 90-ական թվականներին պայքարում եյին մարքսիստների դեմ, պնդելով, թե Ռուսաստանն առանձնակի ճանապարհով է զարգանալու։

Սակայն, յեթե Ուսպենսկին մոտենում է մարքսիստներին, այնուամենայնիվ նրա և մարքսիստների միջև մեծ ու եյական տարբերություն կա։

Իր ամբողջ ուշադրությունը կենտրոնացնելով դյուղացիության վրա, Ուսպենսկին հաշվի չեր առնում առաջացող պրոլետարիատի նշանակությունը։ Պրոլետարական հեղափոխությունը նրան պատկերանում էր միայն «վորպես հուժկու, դաժան ու անխնամ մի հսկա, ձեռքում վիթխարի մահակ, վորն անխտիր ամբողջ յերկրի դեմ և բարձրագված» («Զանձրացող հասարակություն»)։ Այսպես եր նա դրում 1884 թվականին։ 1887 թվակա-

նին նա, իր ասելով, «գայթագություն եր զգում մտածելու համաձայնեցված աշխատանքի պայծառ ապագայի մասին», սակայն կապիտալիստական զարգացման անխուսափելիության միտքը նրան հացնում է անկումային տրամադրության։ Խոսելով «կտրոնի տիրապետության մասին», նա հեղնանքով ասում է. — «Պայծառ ապագան կը վոչ այլ կերպ, բայց յեթե այն դրությունից հետո, յերբ ամբողջ աշխարհը կայրվի գործարաններում։ Տիս' ըստ տեսաբան ե»։

Մարքսիստներն այդպիսի տրամադրություն չեյին ճանաչում։ Նրանք յեռանդով կատարում եյին իրենց աշխատանքը, ձգտելով գեպի պրոլետարիատի հաղթանակը, հաստատապես համոզված լինելով, վոր այդ հաղթանակն ապահով է։

Լիակատար միասնություն չկար նաև Ուսպենսկու և հեղափոխական-նարոդնիկների մեջ։ Վերջիններիս հեղափոխականությունն արտահայտվում եր նրանով, վոր գյուղացիության մեջ պրոպագանդիստական ախատանք եյին կատարում և 70-ական թվականների վերջից տեսողիստական յերացներ կազմակերպում։ 1879 թվականի ամառը նարոդնիկներից առանձնացավ «Նարոդնայա Վոլյա» կուսակցությունը, վոր տեսողը մրտցրեց իր ծրագրի մեջ։ Կուսակցությունն իր առաջ խնդիր եր դնում այդ ճանապարհով տապալել ինքնակալությունը, գրավել իշ-

իսանությունը և ժողովրդին հնարավորություն տալ, վոր նա պետական նոր իրավակարգ հաստատի Ռուսաստանում:

Դեռ արտասահմանում գտնվելու տարիներին (1874-1876թ.թ.), շվիվելով հեղափոխական-եմի իդրանտների հետ, Ռւսպենսկին ճանաչեց Ռուսաստանում հեղափոխական պայքար մղելու անհրաժեշտությունը: Ալբերտով գյուղում, նա, պետք ե կարծել, մասնակցում եր պրոպագանդիստական աշխատանքին: Սակայն 1880 թվականին նա հանգեց այն յեզրակացության, վոր գյուղացիությունը կարող ե միայն մի պատասխան տալ ինտելիգենտ պրոպագանդիստին. — «Քիթդ մի խոթեր» (այսպես ե նրա «Գյուղացին և գյուղացիական հարցը» ակնարկների 4-րդ գլխի վերտառությունը): Ինչ վերաբերում ե տեռորին, այսաեղ Ռւսպենսկին, թեև մոտենում եր նարոդովոլցիներին, սակայն չեր կարող համաքայլ քայլել նրանց հետ. նա վաստական մասնակցություն չուներ տեսորիստական պայքարին: Ականավոր նարոդովոլցիներով, — անսովոր եներգիայի և անձնուրացության կամքի տեր այդ մարդկանցով հրապուրվելն արտահայտվել ե Ռւսպենսկում, յերկերում, ուր նա փորձել է հիադմունք արտահայտել նրանց հանդեպ: «Կինն ուղղեց» ակնարկում (1885 թ.) նա վերա միջների մասին (վորն այնքա՞ն անձնատրվեց լիակատար անձնուրացություն պա-

հանջող հեղափոխության) ասում ե, վոր նրան նայելիս, «ամեն մի տանջանք կորցնում եր իր յերկյուղալի բնույթը», և «վորքա՞ն սարսափելի յե» բառերի փոխարեն ուզում եյի ասել՝ «վորքա՞ն լավ ե, վորքա՞ն հրաշալի»: Ռւսպենսկին ուզում եր տալ, «Խիզախ յերիտասարդը» վերտառությամբ մի ակնարկ, վորտեղ հանդես եր գալիս մի այլ Նարոդովոլեց, — Հերման Լոպատինը: Սակայն նարոդովոլցիների թեորիան, վորի նպատակն եր գյուղացիության համար կողմնակի բարեգործություն անել, գրավված իշխանության կողմից նվեր տալ, — չեր համապատասխանում Ռւսպենսկու հայացքներին, վորը կարծում եր, թե կյանքի կառուցվածքը կարելի յե փոխել միայն «ժողովրդի» միջոցով, այլապես նրա պատասխանը կլինի՝ «քիթդ մի խոթեր»:

80-ական թվականներին, «խոռովությունները» ճնշելու համար կառավարության քաղաքական վայրի ուժիմի դեմ յեղած բողքն արտահայտվեց Ռւսպենսկու մի շարք ակնարկներում: Սրանցից մեկն ե «Մեխանիզմի փոքրիկ թերությունները», վորը լույս տեսավ 1887 թվականին:

Վախենալով տեսորիստական յելութիւններից, կառավարությունը «խոռովությունների» դեմ կռվելիս իր կասկածամտությունը հասցնում եր մինչև անհեթեթության, մինչե ծիծաղելիության: Նա դեպի պայքար եր կոչում թե քաղքենուն, թե գյուղացիությանը,

վորին գյուղական հոգեռականության միջոցով հավատացնում եր, թե թագավորին սպանել են ազնվականները, դժգոհ լինելով ճորտատիրական իրավունքը վերացնելուց։ Սկսվեցին ամենավայրի մատնություններ։ Ինչպես ցույց ե տրված հիշյալ ակնարկում, քաղքենիները յերբեմն դաժան կերպով բոլորովին անմեղների «դատաստանն եյին անում»։ Այդպիսի «դատաստաններում» յերբեմն արտահայտվում եր դասակարգային թշնամանքը, վորն իր համար ուրիշ յելք չեր գըտնում և բացատրվում եր նրանով, վոր ավելի ուժեղ կեղեքիների «դատաստանն անելր» հնարավոր չեր։ Ակնարկում պատկերված բթամիտ տղան՝ բուֆետի ծառայողը, իր գյուղում նեղվել եր վաճառականից և ահապատրաստ եր պատեհ առիթին ամեն մի վաճառականի «ատամները ջարգել»։ Տեղի ունեցած «սխալները» ծանր հետևանք եյին ունենում այն մարդկանց կյանքի համար, ովքեր թույլ եյին տալիս այդ «սխալները»։ Յեկ ծանր հետևանքն արդարացնելու համար իշխանությունը, ապա քաղքենին, ասում եյին. «Ե՛ս գիտե՞ք ինչ ժամանակներ են»։ Ուսպենսկու ակնարկում վաճառականի խոսքերով տրված ե դրա թունավոր պատասխանը. — «Զե, սիրելի բարեկամներ, յեթե դուք հիմարի գլուխներ ու հայտաներ չլինեյիք, ժամանակներն ել ուրիշ կլինեցին»...

### Ն. ԲԱԼԱՅԵՎ

### ՆԿԱՏՎԱԾ ԿԱՐԵՎՈՐ ՎՐԻՄԱԿՆԵՐ

Մրբագրչի հանցավոր անփուրության հետեւանքով գրեում սպրել են հետեւյալ սխալներն ու աղավաղումները. —

53 եջում, վերեկց 9-րդ տողի փոխարեն պետք և կարգալ. — . . . «Վաշ ուտում եր, վոչ խմում, ցանկանալով աս . . . »

Բացի դրանից, սպրել են հետեւյալ աղավաղումներն ու սխալները

Եզ	Տող	Տպված ե	Պետք ել լինի
5	7 վերեկց	շինական	քաղքենի
11	13 »	հարաբերություն	խարեբայություն
17	4 »	բարերոր	բարերար
26	1 »	հասցնելու	հասցնելու
29	7 »	քուռակ եր	քառորդն եր
33	10 »	հագոց	հոգոց
35	3 »	այդ	այն
41	11-12 »	վերտրամերմամբ	վերաբերմամբ
46	11 ներքեկց	յերգեմն	յերկում
48	14 »	իրեն ե	իրենն ե
51	7 »	Հարգել	Հարգել
56	12 ներքեկց	յերկար	յերկարահասակ
68	10 վերեկց	միշն	միշն
77	1 ներքեկց	բառ	բառ
86	11-12 »	աշխատելու	աշխատելով
88	7 վերեկց	ուտում եր	ասում եր
93	5 »	գյուղի	գյուղի
»	12-13 »	բանվորությունը	բնավորությունը
97	15 ներքեկց	թղթաղաղի ուտելիունը	թղթաղաղի և ուտելիունը



522



LIBRARY  
UNIVERSITY OF TORONTO  
1981

75 404.

Н А Р М .  
2-9852а

СТ



ГЛЕБ УСПЕНСКИЙ  
ЧЕТВЕРТЬ ЛОШАДИ

Гиз. ССР Армении. Эревань 1935 г.

1345-32



14467

Apm

2-9822